

# Ամառ, Աշակերտ, Ամառային աշխատանք

Ամառը եկաւ. այս եղանակը տարբեր նշանակութեամբ է ընկալուում ծնողների, մշակութային ու կրթութեան բնագաւառների ղեկավար անձնաց շրջանում: Ամառը լաւ ժամանակաշրջան է նրանց համար՝ որոշ ծրագրեր իրականացնելու տեսակետից, որովհետեւ երեխաները արդէն ձերբագատուել են դպրոցական ամենօրեայ դասերից և շատ ժամ են կարող տրամադրել հասարակական, մշակութային և ինքնագարգացմանը նպաստող տարբեր աշխատանքներին:

Իւրաքանչիւր ազգ, պետութիւն և համայնք, ըստ իր



Թ. Յ. Թ. Կրթական խորհրդի նախաձեռնութեամբ Էնգելիի ճամբար է մեկնում դպրոցական առաջին խումբը

հասկացողութեան, զարգացման մակարդակի ու հնարատրութիւնների իր մօտեցումն է ցուցաբերում այս երևոյթի նկատմամբ: Մեր համայնքում այս պարտականութիւնը հիմնականում կատարում են մեր մարզամշակութային միութիւնները, որոնք կազմակերպում են ամառային աշխատանքներ, սկաուտական արշաւներ ու բանակումներ, գեղարուեստական ու մշակութային ակտիւ աշխատանքներ և այլն, որոնց միջոցով փորձում են իրենց ջանքերը ներդնել այդ ուղղութեամբ: Կրթական Խորհրդի կողմից աշակերտութեան համար կազմակերպուած բանակումները նոյնպէս նպաստում են աշակերտութեան ամառային ժամերի լաւ օգտագործմանը: Այս տեսակետից պէտք է բարձր գնահատել տարբեր միութիւնների, ինչպէս նաև Կրթական Խորհրդի ազգամայաստ այս աշխատանքները, և իւրաքանչիւրս էլ մեր կարողութեան և հնարատրութեան սահմաններում թիկունք կանգնենք նրանց:

Ամառային ժամանակաշրջանի անցկացման երեւոյթը բացայայտ քննարկման չի ենթարկուել լայն խաւերի կողմից, որը կարող էր տեսականօրէն կամ գործնականում նպաստել այդ աշխատանքների կա-

տարմանն ու զարգացմանը: Թերևս խորը ուսումնասիրման համար չունենք ճշգրիտ վիճակագրական տուեալներ, բայց, ծանօթ լինելով այդ աշխատանքներին, կարող ենք մօտաւորապէս ասել, որ աշակերտութեան շուրջ 20 տոկոսն է մասնակցում նմանատիպ աշխատանքներին: Ամառային աշխատանքները հիմնականում 3-6 և 6-13 տարեկան հասակի երեխաների համար են կազմակերպուում:

Ի՞նչ գործօցներ են պատճառ դառնում, որ աշակերտութեան մեծ մասը չընդգրկուի այդ աշխատանքներում: Կարծում ենք հետևեալներն են՝ 1. Ծնողներից մի մասի անուշադրութիւնը իրենց երեխաների ամառային ժամանակաշրջանի ճիշտ օգտագործման գործում: 2. Աշակերտ-Միութիւն ոչ բաւարար շփումներն ու յարաբերութիւնները: 3. Նիւթական հնարատրութիւնների սահմանափակ լինելը: 4. Ոչ բաւարար պրոպագանդան:

Ճիշտ գնահատելով մեր հնարատրութիւնները և ուժերը կարող ենք այս երևոյթը լայն քննարկման առարկայ դարձնել համապատասխան մարդկանց համար և ունենալ ծրագիր, որը պէտք է գլխատրի մեր ազգային Առաջնորդարանն ու Կրթական Խորհուրդը՝ իր կողքին ունենալով նաև դաստիարակչական խորհուրդ: Աշխատանքները պէտք է մասսայական բնոյթ կրեն և այստեղ մեծ դեր է կարող ունենալ դպրոցի



միջավայրը այդ նպատակի համար:

Արտագաղթի այս պայմաններում կարևոր է նաև այդ առիթը ճիշտ օգտագործելով հնարատրին չափ զարգացնել ազգային դաստիարակութեան մակարդակը և աշխատել մեր երեխաներին, ինչպէս յարգարժան Սրբազան Ս. Սարգսեանն է ասում. «Դաստիարակել էլ միայն որպէս մարդ, այլ՝ որպէս Հայ Մարդ, որը կը գերադասի ազգային շահերը անհատական և տնտեսական շահերից»: ■

ԷձՅ ԿՅ ՆՅ ՍԾՅ ՍՅ ՍԿՅ

Համընդհանուր արշաւ, առանց երկուսի.- Յունիսի 29 -ին «Թալու-վում» տեղի ունեցաւ մէկ օրեայ սկստակական պատասխանատու-ական արշաւ, որտեղ մասնակցում էին Արարատ, Նայիրի, Սիփան և Բարեգործական միութիւնների սկս-տակական պատասխանատուները: Ինչպէս տեղեակ էր Թեհրանում աշխատում են 6 մասնատիպ սկստակական բաժիններ, այդ համ-ընդհանուրի մէջ ընդգրկուած չեն եղել ԲաՅՅի համալիրի և ԻԱՄՍ սկս-տակական բաժինները:

Իրանի հոգևոր առաջնորդները մեկնեցին Հայաստան.- Թ.Հ. Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Մեսրոպ Մարգարեանն ու Ատրպատականի հայոց թեմի կաթողիկոսական փո-խանորդ Տ.Նշան վրդ. Թովուզեանը հինգշաբթի, 22 յունիսի 2000 թ.-ին մեկնեցին Հայաստան, ներկայ գտնւելու Գարեգին Ա կաթողիկոսի վախճանման Ա տարելիցի հոգեհան-գրատեան արարողութեանը:

Ուսուցչական դաշտահանդէս.- Սեր ստացած տեղեկութիւնների համաձայն ուսուցչական միութեան միջոցով ուրբաթ յունիսին 23-ին կազմակերպւել էր դաշտահանդէս (ուրախ ժամանց) Փիստ Արալիի մօտակայքում գտնուող մի այգում, որտեղ մասնակցել էին թոշակառու և պաշտօնավարող ուսուցիչ-ուսիներ, նաև՝ հրախրեակներ:

Այդ հաւաքին ուսուցչական միութեան նախագահ՝ մեծարգոյ պրն. Միշա Հայրապետեանը իր բարի գալստեան և բար վայելում արտայայտութեան խօսքերի մէջ անդրադարձել է ուսուցիչ-ուսու դերի և առաքելութեան մասին, նրա նիր-ւածութեան անհրաժեշտութիւնը մեր մատաղ սերնդի հայացքի դաստիա-րակութեան գործում, նաև մատնա-նըշել է անցեալում կատարած մի շարք սխալմունքներին մեր աշակեր-տութեան հայերեմագիտութեան ան-մխիթար վիճակի նկատմամբ:

Նա ցանկութիւն է յայտնել, որ ուսուցիչը հեռու խմբակցական նկա-տառումներից կատարի իր ազգա-նըւեր պարտականութիւնը, նկատե-


լով որ ազգապահպանումը պէտք է ընդհանուրի մտահոգութեան խնդիր դառնայ, մեզանից պէտք է վանենք խտրականութեան և միահեծանու-թեան քանդիչ մտայնութիւնը, թող արժանատրին, բանիմացին և կոչում ունեցողին ընթացք տրի ուսուց-չական և տարբեր ասպարէզներում, որպէսզի՝ մեր համայնքը մշակու-թապէս աշխուժանայ և ծաղկի:

ՀՀ -ում ուսուցիչ-ուսիների վերա-պատրաստման դասընթաց-ներ.- Ինչպէս տեղեկացել ենք մի քանի տարի դադարումից յետոյ վերսկսում են սփիւքահայ ուսու-ցիչների վերապատրաստման մի ամսեայ դասընթացները Հայաս-տանում:

Իրանում ՀՀ դեսպանութիւնը ուսուցիչների ընտրութեան պատաս-խանատուութիւնը յանձնարարել է Թ.Հ.Թ Կրթական Խորհրդին: Ինչքա-նով, որ մեզ յայտնի է դեռ մինչ այժմ որևէ յայտարարութիւն այդ կապակ-ցութեամբ Կրթական Խորհրդի կող-մից չի եղել:

ԷձՅ Կ

Թեհրանի օդի աղտոտածու-թեան վերացման համար օգ-նութեան են եկել ռուս մասնագէտ-ները.- (Իրան օրաթերթ 17.6.00):



Ռուսաստանի մի խումբ քաղաքային մասնագէտներ ու պաշտօնեաներ, քաղաքային հարցերի և տեխնոլո-գիայի հիմքերի շուրջ խօսակցու-թեան համար ժամանել էին Իրան: Քննարկուող հարցերի շարքում էր նաև Թեհրանի օդի աղտոտա-ծութեան հարցը, նրանք իրենց փոր-ձառութիւններն փոխանցելու են իրանցի գործընկերներին:

Իրանի նախագահ Խաթամի՝ Բորոք տարածաշրջանի խաղա-ղութեան համար պէտք է աշխատեն.- (Բայան օրաթերթ 19.6.00): Վերոյիշ-



եալ մտքերը նա արտայայտեց ՄԱԿ-ի նախագահի հետ հանդիպելիս: Անդրադառնալով սիւննիստական ռեժիմի ուժերի նահանջը հարաւային Լիբանանից Իրանի նախագար անելացրել է, որ առաջին անգամ այս ռեժիմի ենթարկւելը ՄԱԿ-ի և ապահովութեան խորհրդի որոշմանը մեծ յաջողութիւն պէտք է համարել ՄԱԿ-ի և միջազգային հասարակու-թեան համար:

Կենսոլորտային առաջին միջազ-գային ցուցահանդէսը Իրա-նում.- (Համշարիի օրաթերթ 26.6.00): Իրանի կենսոլորտի պահպա-նութեան կազմակերպութեան նա-խագահ՝ Տիկ. Դուկտ. Մասումէ Էրթեքարը նշել է, որ կենսամթնոլոր-տի աղտոտելը և ոչնչացումը բացի որ վնասում է տնտեսութեան հիմքերը իր ետևում ունի նաև թաքմաձ թազմաթիւ վնասներ:

300 Միլիոն դոլար վնաս, արտասահմանեան ծխա-խոտների գաղտնի առևտրից.- (Համշարիի օրաթերթ 26.6.00): Վերո-յիշեալ վնասը հիմնականում օրինա-կան վարկեր չվճարելու հետևանք է: Իրանում տարեկան օգտագործում է 40 միլիարդ հատիկ սիգարետ: Մրանց կէտը արտադրում է երկրի ներսում, իսկ միւս կէտը անօրինական

ձևով մուտք է գործում երկրի տարբեր սահմաններից:

**Բ**ազմաբևեռային աշխարհի ստեղծում.- (Բայան օրաթերթ 24.6.00): Յունիսի 21-ին Իրանի նախագահ՝ պրն. Խաթամին գլխավորելով պաշտպանության, մշակութային, տնտեսական ու քաղաքական պատվիրակության այցելեց Չինաստան: Նախագահը արտայայտել է այն միտքը, որ Չինաստանի և Իրանի յարաբերությունների զարգացումը բացի երկկողմանի շահերից, մեծ և ազդեցիկ գործօն է հանդիսանալու աշխարհի ու Ասիայի խաղաղության հարցում: Նա անվարձ է, որ այլևս միաբևեռային աշխարհ գոյություն չունի և ամերիկեան միաբևեռային աշխարհի մասին պրոպագանդան մի երևակայություն անել չէ:

ԹՅ ԹՅ Էİ 3 Կ

**Քոչարեանը և Քիմբոնը խօսեցին** *Լարաբաղի հարցի շուրջ*.- (Ռոյտեր): Յունիսի 27-ին տեղի ունեցավ Ամերիկայի և Հայաստանի նախագահների հանդիպումը, որի ընթացքում Քիմբոնը Քոչարեանից պահանջեց մի լուծում գտնել Լ.



Լարաբաղի հարցի համար: Նրանց հանդիպումը 35 րոպե տևեց: Միևնույն ժամանակ «Ազատության» ռադիոկայանը հաղորդեց, որ ԱՄՆ-ի մեծ մասամբ օգնությունները պայմանաւորաձև լինի Լ.Լարաբաղի հարցի լուծման հետ:

Սոյն թականի յունիսի 28-ին Հայաստանը 123 կողմ, զեղո

ղէմ և 7 ձեռնպահ քվեներով ընտրեց Երախտրիդի անդամ

**Իրանը կաշակցի Մեղրու ենթաշրջանում իրականացող միջոցառումներին**(ՀՀ օր. 17.6. 2000).- Վարչապետ Անդրանիկ Մարգարեանն ընդունեց ՀՀ-ում Իրանի



Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Մուհամմադ Ֆարհադ Քոլէյնիին:


Հանդիպման ընթացքում քննարկեցին ինչպէս այն ծրագրերը, որոնք այժմ իրականացւում են, այնպէս էլ յետագայ համագործակցութեան հեռանկարները: Վարչապետի խօսքերով, հայ-իրանական համատեղ գործունեութեան դաշտը բարակաւ ընդարձակ է, եւ այսույետ ռազմավարական գործընկեր երկրների յարաբերություններին պէտք է հաղորդի նոր որակ՝ ներգրաւելով նոր գործօններ: Այս առումով առանձնակի ընդգրկւեցին ՀՀ կառավարութեան կողմից Մեղրու ենթաշրջանում իրականացող միջոցառումները: Մուհամմադ Քոլէյնին հաւաստիացրեց, որ իրանական կողմը պատրաստակամ է, ըստ ամենայնի աջակցել այդ ծրագրին: Նա նշեց, որ համատեղ նախագծերն առանել գործնական բնոյթ հաղորդելու նպատակով առաջիկայում կը ստեղծի միացեալ յանձնախումբ:

**Ռ. Քոչարեանի այցը Ֆրանսիա** (Ազգ. Հեռու. 3.7.2000).- Յուլիսի 30-ին ՀՀ նախագահ Ռ. Քոչարեանը ԱՄՆ-ից ժամանել է Փարիզ: Նա հանդիպել է Ֆրանսիայի նախագահ Յակ Շիրակի, վարչապետի ու սենատու նախագահի, միջազգային Ֆինանսական կազմակերպութեան ղեկավարների եւ սփիւռքահայ բա-

րերարների հետ: Այդ կապակցութեամբ Քոչարեանը «Չարթնոց» օրանաւկայանում նշեց հետեւեալը. «Իսկապէս շատ արդիւնաւէտ եմ համարում բոլոր առումներով: Ամէնից կարեւորն այն է, որ Հայաստանի նկատմամբ վստահութիւնը եւ Ամերիկայում եւ Ֆրանսիայում վերականգնւած է, մի բան էլ անել: Եւ համագործակցութեան, յատկապէս տնտեսական բնագաւառում շատ լուրջ հեռանկարներ գոյութիւն ունեն: Դարաբաղեան հիմնահարցերի մասին Ռ. Քոչարեանը նշեց, որ Հայաստանն այդ հարցում յստակեցում է մտքրել եւ մեկնաբանութիւններ այլեւ չեն լինի:

**Օժեցին Երեւանի Սր. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու խաչերը** (ՀՀ օրաթերթ 27. 6.2000).- Մայրաքոռ Սր. Էջմիա-ծին, Տեղեկատւութեան համակարգ, 26 յունիսի, 2000թ.- Յունիսի 26-ին Ն.Ս.Օ. Տ.Տ.Ամենայն Հայոց Գարեգին Բ կաթողիկոսի հանդիսապետութեամբ տեղի ունեցաւ Երեւանի Սր. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու խաչերի օծումը:

Ի նշանաւորումն Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն



հռչակման 1700-ամեակի՝ Սր. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու կառուցման մտայղացումն ու սկիզբը կապւած են երջանկայիշատակ Վազգէն Ա եւ Գարեգին Ա Վեհափառ հայրապետների անունների հետ: 2001 թականին, երբ ողջ աշխարհը կը սօսի հայ եկեղեցու յորելեանը, այս տաճարում կը կատարեն ծիսական առաջին արարողութիւնները:

**Յայտնաբերեց մեծ քանակութեամբ մարսանեկոթիւն** (Ազգ. Հեռու. 3.7.2000).- Թուրքիայից նեմզ ճանապարհով Հայաստան են ներմուծել մեծ քանակի սննդամթերք՝

հիմնականում հումք եւ շոկոլատ: Բայց նրա շատ փոքր մասն է յայտնաբերել մաքսատունը: Այս գործը յայտնաբերել եւ դատարան է տրել:

**Մարդասիրական օգնութեան կենտրոնական յանձնաժողովի հերթական նիստում**(ՀՀ օրաթերթ 23.6.2000).- Յունիսի 22-ին տեղի ունեցաւ ՀՀ կառավարութեան մարդասիրական օգնութեան կենտրոնական յանձնաժողովի հերթական նիստը, որը վարում էր յանձնաժողովի նախագահ Գագիկ Մարտիրոսեանը:

Յանձնաժողովի նիստում առանձնակի կարեւորեց դեռեւս ծրագրերի մշակման փուլում դոնորների եւ ծրագրեր իրականացնող կազմակերպութիւնների հետ պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցութիւնը: Այս առումով նշեց, որ ներկայացած ծրագրերի վերաբերեալ նախասիրութիւնների, գերատեսչութիւնների ու մարզպետարանների եզրակացութիւնները յաճախ կրում են ձեւական բնոյթ, բաւարար ուշադրութիւն չի դարձում վերայսկման մեխանիզմներին:


Դրա արդիւնքում ոչ միշտ են ծրագրերը նպատակաւորում առաւել կարեւոր ու հեռանկարային խնդիրների լուծմանը:

Դեռեւս յստակ չէ բարեգործական ծրագրերի արդիւնքների հաշւառումը բիզնեսային գործընթացներում: Այդ կապակցութեամբ, նիստում հաստատուած իրաքանչիւր ծրագրի վերաբերեալ համապատասխան նախարարութիւններին, գերտեսչութիւններին եւ մարզպետարաններին տրեցին յանձնարարականներ:

Յանձնաժողովը հաստատեց 2000 թւականի ընթացքում իրականացող 10 բարեգործական ծրագիր:

ԱՄՆ-ի կառավարութեան կողմից իրականացող ծրագրերի թում են Հայաստանի 100 դպրոցներում ինտերնետային կապի ներդրման ծրագրերը եւ Վաշինգտոնի «Ուրբան ինստիտուտի» կողմից համայնքներում իրականացող տեղական ինքնակառավարման եւ «Բնակարանների գնում» ծրագրերը:

Դպրոցաշինութեան բնագաւառում հաստատեց 3 ծրագիր՝ իրա-



նահայ բարերար Լեւոն Ահարոնեանի Ֆինանսատրամբ Երեւանի թիւ 136 դպրոցի վերանորոգման, ԱՄՆ-ի հայ համայնքի Ֆինանսատրամբ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից Վանաձորի թիւ 1 դպրոցի ամրացման ու վերակառուցման եւ «Ագապէ» բարեգործական կազմակերպութեան կողմից Սպիտակի թիւ 7 դպրոցի երկրորդ մասնաշէնքի կառուցման եւ կահատրման ծրագրերը:

Առողջապահութեան բնագաւառում հաստատուած ծրագրերի թում են «Արարկիր» միացեալ մանկական բարեգործական հիմնադրամի 2000-2003 թւականների ծրագրերը եւ Ջոն Հոփկինզի համալսարանի «Ընտանիքի առողջութեան պահպանման» ծրագիրը:

Յանձնաժողովի հաւանութեան արժանացած նաեւ Համալսարանական կրթութեամբ կանանց ասոցիացիայի կրթական- տեղեկատուական ծրագրերը կապուած գեղեցիկ հաւասարութեան խնդիրների հետ:

**Հանդիպում Քրքր Քրքրորեանի հետ** (ՀՀ օրաթերթ 27.6.2000).

Յունիսի 24-ին նախագահ Ռոբերտ Քոչարեանը հանդիպում է ունեցել ամերիկահայ գործարար Քրքր Քրքրորեանի հետ: Քննարկել են Լիսի հիմնադրամի կողմից Հայաստանում իրականացող ծրագրերի կատարման ընթացքին եւ դրանց արդիւնաւետութեան առնչող հարցեր, ինչպէս նաեւ մօտ ապագայում հիմնադրամի կողմից նոր ծրագրեր իրականացնելու հնարատրութիւնը: Յունիսի 25-ին նախագահ Քոչարեանը հանդիպում է ունեցել Ամերիկայի հայկական համագու-

մարի ղեկավարների խորհրդի եւ տնօրէնների խորհրդի ներկայացուցիչների հետ: Հանդիպման օրակարգում եղել են Հայաստանի տնտեսական զարգացման մեջ սփիւռքահայերի մասնակցութեան խրախուսման, ինչպէս եւ Հայաստան-ԱՄՆ յարաբերութիւնների յետագայ խթանման գործում Ամերիկայի հայկական համագումարի եւ ՀՀ իշխանութիւնների համագործակցութեան հարցերը:

**Առաջարկում է ստեղծել նոր կառուցւածքային միաւոր** (ՀՀ օրաթերթ 27.6.2000).

Յունիսի 26-ին Վարչապետ Անդրանիկ Մարգարեանը հանդիպում է ունեցել հանրապետութեան մի շարք գործարարների հետ, որոնք ներկայացրել են երկրում վարող տնտեսական քաղաքականութեան նկատմամբ իրենց վերաբերմունքը, ստահոգութիւնները, տնտեսութեան զարգացման առաջնահերթ խնդիրները: Մասնատրապէս, գործարարներն առաջարկել են՝ վարչապետի անմիջական ղեկավարութեամբ ստեղծել նոր կառուցւածքային միաւոր՝ դրա առջեւ դնելով տնտեսութեան զարգացման ռազմավարութեան մշակման խնդիրները: Գործարարների կարծիքով, այդ կառոյցը պէտք է ունենայ պետական կարգավիճակ:

Ըստ գործարարների, անհրաժեշտ է ճշտել երկրում տարող տնտեսական քաղաքականութեան ընդհանուր տրամաբանութիւնն այնպէս, որ ծրագրի նպատակներն ու խնդիրները թելադրուած լինեն երկրի զարգացման գերակայութիւններով ու արտայատեն մակրոտնտեսական որոշակի ցուցանիշների տեսքով:

Կարեւորելով գործարարների հետ այս հանդիպմանը՝ վարչապետը նշել է, որ պետութիւն- գործարարներ համագործակցութիւնը այսուհետ պէտք է աւելի գործնական դարձնել եւ մշտապէս միմեանց տրող խոստումների, հաւաստիացումների շրջանակներից դուրս գալ՝ աշխատելով «աւելի քիչ խօսել եւ աւելի շատ գործել» սկզբունքով: Անդրանիկ Մարգարեանը կառավարութեան համար առաջնահերթ է համարել ստւերայնութեան, հովանաւորչութեան դէմ պայքարը, գործա-

րարութեան համար մրցակցային հաւասար, նպատակատր պայմանների ստեղծումը, ինչը նաեւ օտարերկրեայ ներդրումների, գործարարների համար երաշխիք կը դառնայ մեր երկրում գործունեութիւն ծաւալելու հարցում: Վարչապետը նշել է, որ ՀՀ նախագահի, «Միասնութիւն» դաշինքի եւ կառավարութեան գործունեութեան ծրագրի հիմնադրութիւնից բխող գործողութիւնների ծրագիրը մշակելիս անպայման հաշի կառնուեն նաեւ գործարարների առաջարկները: Նա գործարարներին առաջարկել է առանձին խումբ ստեղծել տնտեսական օրէնքների մշակաման փուլում կառավարութեան հետ սերտօրէն համագործակցելու եւ իրենց առաջարկները ներկայացնելու համար:

Վարչապետի հետ հանդիպմանը գործարարները յստակեցրել են համագործակցութեան առաջին քայլերը:

**Հայաստան- Իրան տրանսպորտը զարգացնելու նպատակով (Ազգ օրաթերթ 24.6.2000).**- Յունիսի 24-ին պաշտօնական մեկօրեայ այցով Հայաստան էր ժամանել Իրանի Իսլամական Հանրապետութեան ճանապարհների եւ հաղորդակցութեան նախարար Մուհամմադ Հոջաթիին:

ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարար Էդուարդ Մադաթեանը, ընդունելով վերջինիս գլխաւորած պատւիրակութեանը, որի կազմում էր նաեւ Հայաստանում Իրանի դեսպան Մ. Զոլէյիին, նշեց, որ հայ- իրանական յարաբերութիւնները կարող են համագործակցութեան եզրեր գտնել, մասնատրապէս՝ տրանսպորտի բնագաւառում: Բանակցութիւնների հիմնական թեման մնում էին օդային եւ ցամաքային փոխադրումները: Կարեւորելով տարանցիկ բեռնափոխադրումների հարցը, նախարար Է. Մադաթեանն իրանական կողմին առաջարկեց մինչեւ ՋուՖա իրանական սահմանը հատելու թոյլատրութիւն ունեցող հայկական կողմի համար տարանցիկ դարձնել պարսկական տարածքը:

Օդային տրանսպորտի ոլորտում երկու կողմերն էլ իրատեսական համարեցին Երեւան- Թեհրան,

Երեւան - Թարիզ չեքքերի վերաբացումը:

**1-րդ 5000- անոց թրթադրամներ.-**



**(Ազգ օրաթերթ 22.6.00):** Յուլիսի 1-ից շրջանառութեան մէջ կը դրնեն նոր 5000-անոց թրթադրամներ: Այս թրթադրամներն առաւել կատարելագործած են ու պաշտպանած:

**Ով է պատւիրել հոկտեմբերի 27-ը.- (Նշխան տապան):** Հոկտեմբեր 27-ի գործով գլխաւոր մեղադրեալ Նայիրի Յունանեանի նախքին պաշտպան փաստաբան Արտաշէս Պահլաւունու համաձայն՝ արարքը ունեցել է պատւիրատու: Ոճրային այս արարքը ինքնագոյմ չէր, այլ պատւիրատու ունէր, որը դժբախտաբար չի բացայայտուած:

**Ախալքալաքի հայ բնակիչները առարկում են.- (Ժամանակ օրաթերթ 20.6.00):** Ախալքալաքի շրջանի բնակչութիւնն առարկում է ռուսաստանեան ռազմահանգրումն այդտեղից դուրս բերելու դէմ, քանի որ շրջանում նրա ներկայութեան հետ է կապում իր նիւթական բարօրութիւնը: Այդ շրջանից խորհրդարանական Մելիք Ռայիսեանն ասել է, որ ռազմահանգրումում որպէս վարձակաւներ աշխատելու և Ռուսաստանի զինուորականներին այլ սպասարկումներ տրամադրելու հաշիին «գոյութիւն է պահպանում շրջանի կէտը», որտեղ 76 հազար մարդ է ապրում:

**Հոկտեմբերի 27-ի գործի դատախազական հարցը չի մասնատուել.- (Ազգ օրաթերթ 18.5.00):** Մէկ ընդհանուր գործի վարոյթով շարունակուած է հոկտեմբերի 27-ի գործով նախաքննութիւնը, գործի որևէ մասն առանձնացնելու մասին որոշում չի կայացուել: Այս մասին յայտնեց ՀՀ զինդատախազութեան քննչական բաժնի պետ, նախաքննութիւնն իրականացնող քննչական խմբի ղեկավար Արտակ

Յարութիւնեանը: Նա դժարացաւ նշել գործով նախաքննութեան մասնակի կամ լրիւ աւարտի ժամկետները:

**ՀՅԴ-ի և ՀՀ Ռուսաստանի դեսպանի հանդիպումը.-**

**(Երկիր օրաթերթ 18.5.00):** Մայիսի 17-ին ՀՅԴ Հայաստանի ԳՄ գրասենեակում ԳՄ ներկայացուցիչ Արմէն Ռուստամեանը, ԳՄ անդամ Էդուարդ Ղազարեանը, ՀՅԴ փոքրի սանդամ Արեւրա Աճեմեանը ընդունել են Հայաստանում Ռուսաստանի դաշնութեան արտակարգ և լիազօր դեսպան Անատոլի Դրիւկովին: Քննարկել են հայ-ռուսական յարաբերութիւններին, Ռուսաստանի վերջին ներքաղաքական իրադարձութիւններին առնչուող հարցեր: «Երկիր»-ի թրթակիցը հարցազրոյց է ունեցել դեսպանի հետ, տրւել են տարբեր հարցեր, դեսպանը պատասխանելով տարբեր հարցերի նշել է հետևեալ մտքերը.

Ռուսաստան-Բելառուս միութիւնը բաց է ցանկացած երրորդ պետութեան համար: Մենք շատ լաւ հասկանում ենք բոլոր այն զգացմունքները, որ ունի հայ ժողովուրդը այդ գաղափարի հանդէպ: Բայց այստեղ կարևոր է մի բան, այդ միութիւնը պէտք է կառուցի բոլորովին նոր սկզբունքների վրայ, ոչ այնպէս, ինչպիսին Խորհրդային Միութիւնն էր: Եւ հիմա մենք պէտք է շատ ուշադիր գնահատենք ամէն ինչ: Նախ և առաջ պէտք է լինի ժողովրդի և իշխանութիւնների միասնութիւնը այդ հարցում: Երկրորդը պէտք է մանրազնին վերլուծի թէ ինչ կը տայ այդ միութիւնը կոնկրետ պետութեանը, ինչպիսի դրական և ինչպիսի բացասական հետևանքներ կունենայ այդ քայլը: Ռուսաստանը և Բելառուսը կը քննարկեն Հայաստանի անդամակցութեան հարցը և դրա հետ կապած այլ խնդիրներ միայն այն դէպքում, երբ Հայաստանի հասարակութիւնն ու իշխանութիւնները կը յայտնեն, որ պատրաստ են ընդգրկելու Միութեան կազմի մէջ:

**Եղիա Քելիշեանի անամը մասնատր դպրոց Էջմիածնում.-**

**(Երկիր օրաթերթ 23.6.00):** Արդէն մէկ տարի է, որ ստեղծել և գործում է

«Էլիտա» մասնատոր դպրոցը, որը սեպտեմբերի 1-ին կը վերանանի մեր ազգային հերոսներից մեկի՝ Եղիա Քեչիշեանի անամբ:

**Արմենիկումը 165 հիանդների 90%-ը լաւացրել է** .-(Առաւօտ օրաթերթ 15.6.00): «Արմենիկում» ձեռնարկութիւնից յայտնում են, որ 1998-ի նոյեմբերից 165 հիանդ ստացել են «Արմենիկումի» բուժումը: Նրանցից 90%-ը լաւացրել է իր առողջական վիճակը: Հիւանդներից մի քանիսը՝ ԱՄՆ-ից, Ռուսաստանից և Ղազախստանից, համաձայնել են ինտերնետում պատմել իրենց վիճակի մասին: Այդ ամէնը կարելի է կարդալ [www.Aids-armenicum.com](http://www.Aids-armenicum.com) էջում:

### ՕՒԷՁ ¼ ¶ ² ՍՒԷՍ

**Հայ-թուրքական երկխօսութեան առաջին քայլերը** («Օրաթերթ



28.6.2000).- 2000թ յունիսի 17-ին Ֆրանսիայի Սենատում տեղի ունեցած երկխօսութիւնը Թուրքիայի ու թուրքական սփիւռքի դեմոկրատական ուժերի հետ լայն արձագանգ գտաւ Հայաստանի ու Թուրքիայի, սփիւռքի զանգամային լրատութեան միջոցներում: Այս «առաջին քայլը» կազմակերպած էր Փարիզի «Հայկական սփիւռքի հետազոտութիւնների կենտրոնի» կողմից:

Առաջին անգամ Թուրքիայի ընդդիմութեան յայտնի ներկայացուցիչները, որոնցից շատերը Հայաստան էին այցելել ու ծաղկեպսակ դրել հայոց ցեղասպանութեան գոհերի յուշակոթողին, ելոյթ ունեցան Թուրքիայի, Հայաստանի, Ֆրանսիայի հեռուստալսիչիկների առաջ քննարկելով հայոց ցեղասպանութեան Հայկական հարցի, պատմու-

թեան հետ հաշիւում եւ այլ թեմաներ: Համագումարի նաքագահ, գրող ու քաղքանտարկեալ Հանրի ԱլէՖի, «Հայկական սփիւռքի հետազոտութիւնների կենտրոնի» նախագահ-հիմնադիր Ժան-Կլոդ Քեբաքչեանի, յայտնի մտատրական, տպագրիչ ու լրագրող, նախկին քաղքանտարկեալ Ռաֆլոբ Չարաքոլուի, յայտնի լրագրող, մինչեւ վերջերս քաղքանտարկեալ Օթալ Չալիշլարի, Ստամբուլի «Բիլկէ» համալսարանի դասախօս Մեթ թունչեանի, Երեւանի ցեղասպանութեան քանգարանի նստիտուտի տնօրէն Լարենտի Բարսեղեանի, թուրքագէտ ՀՀ ազգային ակադեմիայի աւագ գիտաշխատող Յակոբ Չաքրեանի, ՀՀ նախագահի նախկին խորհրդական Ժիրայր Լիպարիտեանի ելոյթները ցոյց էին տալիս այն բազմաթիւ տեսակետներն ու զաղափարները, որոնք այսօր յուզում են Թուրքիայի ու Հայաստանի, երկու սփիւռքների մտատրականութեանն ու զանգամներից: Երկու կողմերի մօտ յստակ էր նաեւ, որ 21-րդ դարի շեմին հարկատր է ուղղակի երկխօսութեամբ նոր էջ բացել երկու ժողովուրդների պատմութեան մէջ: Թուրքիայի դեմոկրատական գործիչները (նաեւ անհատական ելոյթներով հանդէս եկած Թաներ Աշքամը Համբուրգի համալսարանի դասախօս, «Իւերիմ-լի Եօլ»-ի նախկին լեզնդար դեկավար) եւ Ալի Քրթեմը («Տեղասպանութեան ընդդիմադիրներ») անյետաձգելի տեսան հայոց ցեղասպանութեան ճանաչման փաստի անհրաժեշտութիւնը, հայրերի «տուն-դարձ»-ի իրատուցի պահպանումը ու երկկողմանի բանակցութեան, երկխօսութեան ճանապարհով հարցերի լուծման ուղիներ գտնելը:

#### Համո ՍոսկիՅեան Փարիզ-Երեւան

**Պոտին՝ ՆԱՏՕ-ի տարածումը չի օգնելու Եւրոպայի անվտանգութեանը** .-(Իրան օրաթերթ 17.6.00): Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պոտինը Եւրոպայի պաշտպանութեան նոր պատկեր է ներկայացնում, հռթիռային յարձակման դէմ: Գերմանացի առևտրական հարիւրատր դեկավարների համար ելոյթ ունենալով նա ասաց, որ մեր միջև

համագործակցութիւնը կարող է ստեղծել մի ոչ ստրատեգիկ հռթիռային պաշտպանութեան մի սիւտեմ: Դրա համար միակ բանը որ կարիք ունենք քաղաքական կանքն է:


**ԱՊՀ** (գազաթնաժողովը.- (Ժամանակ օրաթերթ 22.6.00): ԱՊՀ պետութիւնների դեկավարները Մոսկուայի գազաթ-



նաժողովում որոշել են ստեղծել ահաբեկչութեան դէմ պայքարի համատեղ կենտրոն: ԱՊՀ 12 պետութիւններից միայն Թուրքմենստանն է հրաժարել ստորագրել այդ համաձայնագիրը:

**Հակաօդային պաշտպանական համակարգի զարգացում** .-(Ժամանակ օրաթերթ 20.6.00): ԱՊՀ մասնակից պետութիւնների պաշտպանութեան նախարարների խորհրդի նիստում քննարկել են հակաօդային պաշտպանութեան միացեալ համակարգը զարգացնելու հարցերը: Զննարկել են նաև ետխորհրդային տարածութիւնում ռազմական և ռազմատեխնիկական համագործակցութիւնը զարգացնելու այլ հարցեր:

**Արևմտքի ծխախոտ արտադրող ընկերութիւնները քիւրախ են դարձրել երրորդ երկրների պատանիներին** .-(Իրան օրաթերթ 1.6.00): Միջազգային առողջապահութեան կազմակերպութիւնը զգուշացրել է, որ այդ ընկերութիւնները վաճառման յատուկ մի ծրագրով նպատակ են դրել ծխելու մէջ խրախուսեն զարգացող երկրների ժողովրդին յատկապէս երիտասարդներին ու պատանիներին:



## Մոնթի յիշատակին

# «Մոնթեն իմ ինացած ամենաազնիւ հայն էր, Մոնթեն իսկական զօրավար էր»

Ալվարո Բարխուդարեան  
ՀՀ օրաթերթ 13.6.2000

1993-ի յունիսի 12-ին Ադրամի կրկակետերը ոչնչացնելու ժամանակ զոհուեց ԼՂՀ Մարտունիի գնդի հրամանատար, գնդապետ Մոնթե Մելքոնեանը (Աւօ): Հայրենիքի առջև բացառիկ ծառայութիւնների համար նա (յետմահու) արժանացել է Հայաստանի Ազգային Հերոսի կոչման, ինչպէս նաեւ ԼՂՀ եւ Հայաստանի զինուորական բարձրագոյն պարգևների՝ Մարտական Խաչ Առաջին Աստիճանի շքանշանների: Մոնթե Մելքոնեանը Դարաբաղեան պահերազմի ամենավառ հերոսներից է, որի լեգենդար անունը յայտնի է ամէն հայի: Սփիւռքի զուակը, նա եկաւ Հայաստան 1991-ին եւ անմիջապէս նետուեց ռազմաճակատ: Շատ շուտ



Մոնթեն իր կնոջ՝ Սեդայի հետ

վայելելով Դարաբաղի զինուորների համակրանքը՝ բաւականին բարդ իրավիճակում ստանձնեց Մարտունիի ճակատի հրամանատարութիւնը: Մարտունիում, ի յիշատակ Մոնթե Մելքոնեանի, 1994-ին կանգնեցեց իր արձանը, դարաբաղցիները տասնեակ երգեր են հիւսել իրենց Առյի մասին, գրքեր լոյս ընծայել:

Այսօր, երբ թոււմ էր, որ այնեւ աւարտած է հայերիս հերոսների ժամանակը, ուզում եմ վկայակոչել ՎԱԶԳԷՆՆՍԱՐԳՍԵԱՆԻ խօսքերը, որ ասել են Եռաբլուրում հրաժեշտի պահին.

«Իր կենդանութեան օրօք լեգենդ էր արդէն, որովհետեւ իսկական զօրավար էր: Շատ դժար է Մոնթեի մասին խօսել, որովհետեւ բառերը միշտ վշտի առաջ անկարող են: Մեծ վիշտը երբէք հմարատը չէ բառերով արտայայտել: Մեր միակ սիրտիանքը այն պէտք է լինի, որ Մոնթեն զոհուեց Մեծ գործի ճանապարհին:



Ռոբերտ Քոչարեան, Մոնթե, Բակուր Սահակեան, Սամէլ Բաբայեան

Իր երազներն ու ապատակները չափազանց հեռու էին գնում: Վերջին գործողութիւնների ժամանակ ինքը քարտեզի վրայ ոչ թէ մատիտով էր աշխատում, այլ ակոյլ էր տարածութիւնը չափում: Մենք պարտք ունենք իր առջև, ու հանդիսատրութիւնը, որով Մոնթեին յուղարկատրում ենք, հանդիսատրութիւն կը մնայ, եթէ շարունակենք իր կիսատ թողած գործը: Մա է միակ ապացոյցը մեր սիրոյ, մեր Մոնթեի նկատմամբ »:

Մոնթե Մելքոնեանը ինձ յայտնի ամենաազնիւ հայն էր: Չեմ չափազանցնում: Ապշեցուցիչ ազնութեան տէր մարդ էր, իր ապշեցնող քաջութիւնը այնքան չէր զարմացնում, որքան իր ապշեցուցիչ ազնութիւնը: Իր քաջութեան ու ազնութեան խառնուրդով ինքը դարձաւ մեր ազատագրական պայքարի ամենափայլուն, ամենավեհ, ոգեղէն գործիչներից մէկը: Ու հաւատացեք՝ մեր կողքին կան մեծ զօրավարներ, Նժդէհներ: Չվախենանք նրանց անունը տալուց: Մոնթեն նրանցից մէկն էր: Նա իսկապէս զօրավար էր՝ զօրավարի բոլոր գիտելիքներով, համարձակութեամբ ու ամուր ռզով: Մեծ գաղափարական էր:

Մոնթեն հայոց բանակի գաղափարական թեւի ամենափայլուն ներկայացուցիչն էր: Այն հրաշալի խառնուրդը, որը վաղը մեզ դարձնելու է աշխարհի ամենահզօր բանակներից մէկը: Եթէ ճշմարիտ է այն ձեռնկերպումը, թէ իւրաքանչիւր ազգ հզօր է իր Մեծ Մտեալներով, մեր միակ սիրտիանքը այն է, որ մենք հզօր ենք նաեւ Մոնթեով:

Մոնթեն շատ մեծ Մարդ ու շատ մեծ զօրավար էր: Մոնթեի կորուստը զուակի կորուստ չէ, մեր բանակի պաշտպանութեան կորուստը չէ, Արցախի ու Հայաստանի կորուստ չէ, այլ ամբողջ հայ ազգի կորուստն է: Ազգովի պիտի սզանք ու ազգովի համախմբուենք մեր Մեծ Մտեալների, վերջինը Մոնթեի յիշատակի, հոգու շուրջ ու պիտի երդուենք, որ Մոնթեի թողած գործը կիսատ չի մնայ»:

# Հաֆեզ Ասադ,- «Ես վաղուց էի երազում լինել Հայաստանում» Սիրիայի նախագահի միակ այցելութիւնը Երեւան 1979 թւականին

Այս օրերին, երբ Սիրիան ու նրա բարեկամները հրաժեշտ են տալիս խոշորագոյն քաղաքական գործիչ, Սիրիայի Արաբական Հանրապետութեան նախագահ Հաֆեզ Ասադին, հայ ժողովուրդը չի կարող չյիշել 1979 թականին Հ. Ասադի Երեւան կատարած միակ այցը: Այդ այցի կազմակերպիչներից էր տողերիս հեղինակի հայրը՝ Հենրիկ Լիլոյեանը, որն այն ժամանակ պաշտօնավարում էր ՀԿԿ կենտրոնում՝ ինֆորմացիայի ու արտասահ-



մանեան կապերի բաժնի վարիչի տեղակալ:

Հ. Ասադը ԽՍՀՄ-ում էր պաշտօնական, բարեկամական այցով խորհրդային ղեկավարութեան հրավերով: Այդ ուղևորութեան շրջանակներում 1979թ. հոկտեմբերի 17-ին նա ժամանեց Երեւան: «Զուարթնոց» օդանաւակայանն այդ առիթով զարդարած էր ԽՍՀՄ, Սիրիայի ու Հայկական ԽՍՀ պետական դրօշներով: Օդանաւակայանում էին «հասարակայնութեան ներկայացուցիչները»՝ երեքական դրօշակներ ձեռքերին, դրանք Երեւանի ձեռնարկութիւնների աշխատատրներ էին, որոնք, այն ժամանակ ընդունած արարողակարգին համապատասխան, ողջունում էին բարձրաստիճան հիւրին՝ ժողովրդի անունից:

Յատուկ օդանաւի շարժասանդուխքի մօտ Հ. Ասադին ողջունում է Հայաստանի բարձրագոյն ղեկավարութիւնը՝ ՀԿԿ կենտրոնի առաջին քարտուղար Կարէն Դեմիրճեանը, Հայկական ԽՍՀ Գերագոյն խորհրդի նախագահութեան նախագահ Բարգէն Սարգիսովը, ՀՄՀԽ նախարարների խորհրդի նախագահ ֆառէյ Սարգսեանը: Քիչ հեռու շարած են միւս դիմատրոնները, որոնց թում են նաեւ կուսակցութեան աշխատողներ: Յիշենք, որ նրանք դիմատրոն են ոչ միայն Սիրիայի նախագահին, այլեւ Սիրիայի արաբական սոցիալիստական վերածնութեան կուսակցութեան (ԲԱԱՍ) գլխատր քարտուղար Հ. Ասադին: Միութեանական իշխանութիւնները ներկայացնում են ԽՍՀՄ Գերագոյն խորհրդի նախագահութեան նախագահի տեղակալ, Ուկրայնիայի ԳԽ ղեկավար Ալեքսէյ Վատչենկոն, ԽՍՀՄ ԱԳՆ գլխատր քարտուղար Իգոր Եժովը, Սիրիայում ԽՍՀՄ դեսպան Վլադիմիր Իվսինը:

Այնուհետեւ, ինչպէս գրում էին ժամանակի թերթերը, ատօմեքենաների շարասիւնը մտոցիկլետների ուղեկցութեամբ ուղևորում է դէպի մայրաքաղաք: Ճանապարհին հազարատր երեւանցիներ ողջունում են հիւրին... Ի դէպ Հ. Ասադին ուղեցող ճանապարհային ոստիկաններից մէկը՝ երիտասարդ միլիցիոներ Մարգար Օհանեանն էր, որը տարիներ անց գլխատրեց Հայաստանի ՆԳՆ պետաուստեսչութիւնը: Հ. Ասադն իջեանել էր կառավարութեան ընդունելութիւնների տանը՝ Լեւոնի (այժմ՝ Մաշտոցի)պողոտայի վերջնամասում: Տան վրայ բարձրացել էր Սիրիայի պետական դրօշը:

Այցի ծրագրի գլխատր կէտը հանդիպումն էր ՀԿԿ կենտկոմում հանրապետութեան ղեկավարների հետ: Ինչպէս տեղեկացնում է Արմէնպրեսի հաշիտութիւնը, հանդիպման սկզբում ջերմօրէն ողջունելով Հ. Ասադին եւ սիրիական պատւիրակութեան անդամներին, Կարէն Դեմիրճեանը ընդգծել է ԲԱԱՍ-ի գլխատր քարտուղարի մեր երկրի կատարած այցի մեծ նշանակութիւնը: «Երէկ Մոսկւայում յաջողութեամբ ւարարուեց խորհրդա-սիրիական բանակցութիւնները, ասաց Կ. Դեմիրճեանը, խոշոր քայլ են ԽՍՀՄ ու Սիրիական Արաբական Հանրապետութեան համագործակցութեան ու փոխ-ըմբռնման ընդլայնման գործում...»:

Այնուհետեւ, գրում է Արմէնպրեսը, «Կարէն Դեմիրճեանը սիրիացի հիւրին պատմեց ԽՍՀՄ ժողովուրդների եղբայրական ընտանիքում տնտեսութեան ու մշակութի բնագավառներում Խ. Հայաստանի աշխատատրների ձեռք բերած նւաճումների, ԽՄԿԿ 25-րդ համագումարի որոշումների տնտեսական ու սոցիալական զարգացման հեռանկարների մասին»:

Կարէն Դեմիրճեանն ազատասէր սիրիական ժողովրդին, արաբական աշխարհի հայրենասէր բոլոր ուժերին յաջողութիւններ մաղթեց նրանց արդար պայքարում՝ յանուն Մերձատր Արաւելքում կայուն խաղաղութեան հաստատման, ընդդէմ իմպերիալիզմի եւ նրանց կամակատարների մեքենայութիւնների:



## Հայոց Բարեկամը

Շնորհակալություն յայտնելով Հայաստանում սիրիական պատերազմի հետևանքով ցուց տաճ ջերմ, սրտազին ընդունելության համար, Հ. Ասադն ասաց. «Մենք առաջ էլ պատկերացում ունեինք հայ ժողովրդի մասին, բայց ընկեր Դեմիրճեանի պատմածը, որ մենք լսեցինք հետաքրքրությունս, զգալիորեն լրացրեց մեր իմացածը Հայաստանի վերաբերյալ: Չեր հանրապետությունն այսօր մեծ առաջադիմություն է հասել կենցաղի բոլոր բնագավառներում: Հայ ժողովուրդը հարուստ պատմություն ունի, շարունակել է Հ. Ասադը: Մենք լա գիտենք մասն ձեր ժողովրդի պատմության ողբերգական եւ հերոսական էջերը, եւ մենք Սիրիայում ժամանակին յուզումներով էինք համակել հայ ժողովրդին վիճակած ողբերգական իրադարձությունների առիթով:

Խօսելով հայ ժողովրդի ներկայի մասին, պետք է նշել, որ Սիրիայում ապրող հայերը եռանդուն մարդիկ են, որոնք ամենուրեք յարգանք ու սէր են վայում: Նրանք մեր երկրի իրաւահաւասար քաղաքացիներն են, լա գիտեն իրենց իրաւունքներն ու պարտականութիւնները: Լինելով գործարար, նւիրած մարդիկ, նրանք նշանակալի դեր են խաղում մեր հանրապետութեան կենցաղի բոլոր բնագավառներում», յայտնել է Հ. Ասադը:

«Ես վաղուց էի երագում լինել Հայաստանում, բայց այս կամ այն պատճառով դա չէր յաջողում, խոստովանել է Սիրիայի նախագահը: Եւ այսօր ես ուրախ եմ, որ իմ վաղեմի երագանքն իրականացաւ: Մեզ այստեղ ջերմ ընդունելութիւն ցոյց տրեց: Երեսուն էր, որ Երեսանի բնակիչներն անկեղծ զգացումներ են տածում մեր հանդէպ: Մենք սիրեցինք նրանց, ինչպէս եւ՝ նրանք մեզ...»:

Հոկտեմբերի 17-ի երեկոյեան ՀԿԿ կենտրոնը, Հայկական ԽՍՀ Գերագոյն խորհրդի նախագահութիւնն ու կառավարութիւնը ճաշկերոյթ տուցին ի պատիւ Հ. Ասադի: Թերթի երեք սինակի ծաւալով լուրի մէջ, որը բարեխղճօրէն թարկում է ընդունելութեանը մասնակցած անձանց պաշտօններն ու ազգանունները, կար միայն մէկ տեղեկատուութիւն՝ այն է, ճաշկերոյթն անցաւ ջերմ, բարեկամական մթնոլորտում:

Այցի երկրորդ, վերջին օրը, հոկտեմբերի 18-ն էր: Առաւօտանից Հ. Ասադն այցելեց «Հայէլէկտրօ» գործարան, որի արտադրանքը քաջ յայտնի էր Սիրիայում, ուր առաքում էր խորհրդա-սիրիական տնտեսական համագործակցութեան շրջանակներում: Արտադրական միատրման գլխաւոր տնօրէն Ռոբերտ Ամիրեանը հիւրին ծանօթացրեց այդ խոշորագոյն ձեռնարկութեան գործունէութեանը, նրա զարգացման հեռանկարներին: Հ. Ասադը եւ պատերազմի հետեան անդամները շրջեցին գործարանի արտադրամասերում, գրուցեցին բաւուրների ու մասնագէտների հետ, ծանօթացան արդիւնաբերական արտադրանքի մնուցների ցանցահանդէսին, մասնաւորապէս Սիրիա արտահանող էլէկտրական մեքենաներին:

«Հ. Ասադը էլէկտրամեքենաշինարարներին սրտազին շնորհակալութիւն յայտնեց ջերմ ընդունելութեան համար, Սիրիա առաքող արտադրանքի որակի համար, կոլէկտիւին մաղթեց աշխատանքային յաջողութիւններ», կարդում ենք այն օրերի թերթերում:

Դուրս գալով գործարանից, Սիրիայի նախագահը շրջեց քաղաքում, ծանօթացաւ տեսարժան վայրերին: Լեմինի (այժմ Հանրապետութեան) հրապարակում էլ արել է այս լուսանկարը (Հ. Ասադի շրջապատում են Ալեքսէյ Վատչենկոն, Հենրիկ Լիլոյեանը եւ Բարգէն Մարկիսովը): Սիրիայի ղեկավարը եղաւ «Յաղթանակ» զբօսայգում, ծաղիկներ դրեց Անյայտ զինորդի գերեզմանին, Ծիծեռնակաբերդում ծաղիկներ դնելով Մեծ եղեռնի զոհերի յուշահամալիրին:

«Ես ջերմ ընդունելութեան եւ շոյալ հիւրընկալութեան արժանացայ Խ. Միութեան այն բոլոր քաղաքներում, ուր եղայ իմ այցի ժամանակ, դա վերաբերում է ինչպէս Մոսկուային, այնպէս էլ Խորհրդային Հայաստանի մայրաքաղաք Երեսանին, ասաց Հ. Ասադն այցի ժամանակ: Հեռանալով Խ. Միութիւնից, ես մեծ գոհունակութեամբ իմ ողջոյններն եմ ուղղում խորհրդային ղեկավարներին եւ Հայկական ԽՍՀ ղեկավարութեանը, յայտարարեց Սիրիայի նախագահը: Ինձ համար հաճելի է նաեւ ողջունել հիւրընկալ հայ ժողովրդին, որը մեզ ջերմօրէն ընդունեց իր երկրում, ինչպէս նաեւ ողջունել ԽՍՀՄ բոլոր ժողովուրդներին»:

Սա է այցի փաստագրական կողմը: Ցաւօք, լուսահոգի հայրս չի թողել գրառումներ Սիրիայի մեծ զաւակի այցի մասին: Մակայն այս նիւթերը վկայում են Հաֆէզ Ասադի մեր ժողովրդի ու երկրի տածած մեծ հետաքրքրութեան ու համակրանքի մասին: ■

Տիգրան Լիլոյեան  
Ազգ օրաթերթ 14.6.2000

### Ստացւած գրութիւն

Խմբագրութիւնը ստացել է ներքոյիշեալ գրութիւնը ԻԱՄՄ-ից, հարկ է նշել, որ մատնանշած լուրը ստացել էր հաւաստի աղբիւրներից, որոնք անհրաժեշտութեան դէպքում կբացայայտուեն:

ԽՍՀՄ ԳՐՈՒԹԻՒՆ

« Լոյս » երկշաբաթեթի յարգոյ խմբագրութիւն յարգարժան խմբագիր

Թերթիդ 2000թ.-ի մայիսի 31-ի (5-րդ) համարի 4-րդ էջի կենտրոնական սինեակում, տպագրած է մի լրատութիւն, Իրանահայ Ազգային և Մշակութային Միութեան ներկայացուցիչների և Թեհրանի Հայոց յարգարժան Թեմական Խորհրդի հանդիպման մասին, որը տեղի է ունեցել ընթացիկ տարւայ մայիսի սկզբին:

Մեզ համար անձանօք Չեր լրատութեան աղբիւրը իր լուրի մէջ տեղ է սխալ, ապակողմնորոշող և իրականութեանը չհամապատասխանող տեղեկութիւններ այդ հանդիպման ժամանակ արծարծած նիւթերի շուրջ:

Ուստի այն գրութեամբ ԻԱՄՄ-ը հերքելով այդ լրատութեան մէջ արծարծած նիւթերը, երկրում աշխատող մամուլի օրէնքի համապատասխան յօդածների համաձայն, ցանկանում է, որ այս հերքումը նոյնութեամբ զտեղել նոյն էջում, այն ստանալուց անմիջապէս յետոյ տպագրող թերթիդ առաջիկայ համարում:

Յարգանօք՝  
ԻԱՄՄ Վարչութիւն

Ï² ÛàÛ², ðàòÂÆòÛ¹Â °Ðð² ÛÆ Ð² Ûàò Â °ØÆ

**30ԴԻԱԾ 31**

Պատգամատրական ժողովի աշխարհական անդամները ընտրում են հետեւեալ կարգով.-

ա- Պատգամատրական Ժողովի քառամեայ շրջանը լրանալուց չորս ամիս առաջ, Թեմական Խորհուրդը կեանքի է կոչում 11 հոգուց բաղկացած մի ընտրական Կենտրոնական Ցանձնախումբ:

բ- Ընտրական Կենտրոնական Ցանձնախումբը համաձայն սոյն կանոնադրութեան 30-րդ յօդուածում ճշտած տւեալների, որոշում է թեմիս ենթակայ բոլոր ընտրաշրջանների թաղամասերի եւ թեմիս մաս կազմող շրջանների պատգամատրների թիւը:

գ- Թաղամասերում պատկան թաղամասի պատգամատրների ընտրութիւնը, ընտրական Կենտրոնական Ցանձնախմբի հսկողութեան ներքոյ, կազմակերպում է ընտրական Կենտրոնական Ցանձնախմբի կողմից նշանակած ենթայանձնախըմբերի միջոցով:

դ- Իւրաքանչիւր ընտրաշրջանում բնակւող եւ ընտրելու իրատւոնք ունեցող ազգայինները, Ընտրական Կենտրոնական Ցանձնախմբի միջոցով ճշտած թիւը լրացնելով, որոշեալ ժամանակաշրջանում պատկան ենթայանձնախմբին են ներկայացնում իրենց թեկնածուները:

ե- Ենթայանձնախմբերը, որոշեալ ժամանակաշրջանի աւարտից յետոյ, Ընտրական Ցանձնախմբին են ներկայացնում պատկան ընտրաշրջանի թեկնածուների ցանկը:

զ- Ընտրական Կենտրոնական Ցանձնախումբը, քննարկելուց յետոյ ներկայացւած ցանկերը, մամուլի եւ առանձին թերթիկների միջոցով հանրութեան է ներկայացնում ընտրելու իրատւոնք ունեցող թեկնածուների ցանկը:

է- Ընտրութեան համար որոշւած օրը իւրաքանչիւր ընտրաշրջանում բնակւող ազգայինները, ընտրական յանձնախմբի յայտարարած թեկնածուների ցանկից, հաւասար, գաղտնի եւ ուղղակի քւէարկութեամբ ընտրում են իրենց պատկան ընտրաշրջանի

համար որոշւած թուվ պատգամատրներ:

ը- Թեմիս ենթակայ քաղաքներում այս յօդուածում թաղային ընտրական ենթայանձնախմբերի համար նախատեսւած իրատւութիւններն ու պարտականութիւնները տրւած են Եկեղեցի-դպրոցական հոգաբարձութեան:

թ- Ընտրութիւններին առնչւող մրնացեալ մանրամասնութիւնները ճշտում են Ընտրական Կենտրոնական Ցանձնախմբի կողմից ու Թեմական Խորհրդի վաւերացումն ստանալուց եւ հանրութեան տեղեկացւելուց յետոյ գործադրութեանն դրում:

**30ԴԻԱԾ 32**

ա- Պատգամատրական Ժողովի Հոգեւորական անդամները ընտրում են Քահանայից ժողովի կողմից, հաւասար, գաղտնի եւ ուղղակի քւէարկութեամբ:

բ- Պատգամատրական Ժողովի հոգեւորական անդամների թիւը ճշտում են Ընտրական Կենտրոնական Ցանձնախմբի կողմից եւ սոյն կանոնադրութեան 29 եւ 30-րդ յօդուածներում ճշտած տւեալների հիման վրայ:

**30ԴԻԱԾ 33**

Իւրաքանչիւր պատգամատր պիտի ունենայ մանդատ տրւած Ընտրական Կենտրոնական Ցանձնախմբի կողմից:

**30ԴԻԱԾ 34**

ա- Պատգամատրների ընտրութեան դէմ եղած բողոքների քննարկումը կատարում է Ընտրական Կենտրոնական Ցանձնախումբը, որը իր աշխատանքների զեկոյցը, ինչպէս նաեւ ստացւած բողոքների քննարկութեանց արդիւնքը նշանակւած ժամկէտին յանձնում է Թեմական Խորհրդին առ ի յայտարարութիւն հանրութեան:

բ- Եթէ բողոքների քննարկութեան արդիւնքը, անհրաժեշտ դարձնի նոր ընտրութիւնների կատարումը, որեւէ ընտրական շրջանում, Ընտրական

Կենտրոնական Ցանձնախումբը կը ձեռնարկի նոր ընտրութեանց պատկան շրջանում:

գ- Պատգամատրների մեծամասնութեան ընտրութիւնից յետոյ, Առաջնորդը ամենաուշը մինչեւ 15 օր, հրահրում է Պատգամատրական Ժողովի անդրանիկ նիստը:

դ- Իր պարտականութիւնները լրացնելուց եւ բոլոր պատգամատրների մանդատների, վերջնական վաւերացումից եւ պատգամատրական ժողովի անդամների թիւը լրացնելուց ու արդիւնքը Թեմական Խորհրդին զեկուցելուց յետոյ, Ընտրական Կենտրոնական Ցանձնախումբը լուծարքի է ենթարկւում:

ե- Թեմական Խորհրդը ընտրութիւնների վերջնական արդիւնքը յայտարարում է առ ի տեղեկութիւն հանրութեան:

զ- Նորընտիր պատգամատրների մանդատների վերջնական ստուգումը կատարում է ինքը՝ Պատգամատրական Ժողովը:

է- Պատգամատրական Ժողովը, իր ներքին աշխատանքները աւարտելուց անմիջապէս յետոյ, իր կազմութեան եւ գործի ձեռնարկման մասին տեղեկացնում է Վեհափառ Հայրապետին, Առաաաջնորդի միջոցով:

**30ԴԻԱԾ 35**

ա- Պատգամատրական Ժողովը տարեկան ունենում է մէկ նստաշրջան, նախընտրաբար ապրիլ ամսին, ունկնդրելու համար Թեմական Խորհրդի եւ հաշիւեցնիչ մարմնի գործունեութեանց ամփոփ զեկոյցը: Միայն վերոյիշեալ մարմինների գործունեութեանց աւարտին, Պատգամատրական Ժողովը քննարկում ու բանաձեւ է սալիս Թեմական Խորհրդի եւ Հաշիւեցնիչ Մարմնի գործունեութեան մասին եւ ընտրում նոր Թեմական Խորհրդի եւ Հաշիւեցնիչ Մարմնի կազմերը:

բ- Պատգամատրական Ժողովն իր առաջին նիստում թեմակալ Առաջնորդի բացման աղօթքից յետոյ ընտրում է առժամեայ դիւան, երիցագոյն եւ կրոստերագոյն պատգամատրներից, որը կատարում է նոր-

ընտիր պատգամատրոսների մանդատների ստուգումն:

գ- Պատգամատրական ժողովը, մանդատների ստուգումից յետոյ, ընտրում է մնալուն դիւան բաղկացած երկու ատենապետից ու երկու ատենադպիրներից:

դ- Պատգամատրական ժողովը կարող է ունենալ արտակարգ նիստեր՝ Առաջնորդի, Պատգամատրական ժողովի դիւանի, Թեմական Խորհրդի եւ Հաշիւքննիչ Մարմնի առաջարկութեամբ, կամ պատգամատրների ընդհանուր թի մէկ չորրորդի գրատր դիմումի հիման վրայ:

ե- Պատգամատրական ժողովի արտակարգ նիստերի իրաւասութիւնները, նախապէս ճշտած օրակարգի սահմաններում, համապատասխան են Պատգամատրական ժողովի տարեկան նիստերի իրաւասութիւններին:

**30ԴԻԱԾ 36**

Պատգամատրական ժողովի իրաւասութիւններն են.

ա- Ընտրել կամ հրաժարեցնել Թեմակալ Առաջնորդին կամ Առաջնորդական Տեղապահին:

բ- Ընտրել Ազգային ժողովի եւ Մեծն Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի ընտրութեան աթիւ գումարած յատուկ ընտրական ժողովի պատգամատրներ:

գ- Ընտրել Թեմական Խորհուրդ:

դ- Ընտրել Թեմի Հաշիւքննիչ Մարմին:

ե- Քննել եւ հաստատել Թեմական Խորհրդի տարեկան ելեւմտից նախահաշիւը:

զ- Հաստատել Թեմական Խորհրդի կողմից, սոյն կանոնադրութեան նախատեսած սահմաններում, կեանքի կոչւած մարմինների կազմութիւնը եւ նրանց անձնակազմերը:

է- Հաստատել Թեմական-եկեղեցական տուրքեր եւ սահմանել նրանց գանձման եւ բաշխման միջոցներն ու ձեւերը:

ը- Քննել Թեմակալ Առաջնորդի եւ Առաջնորդական Տեղապահի դէմ յարուցւած հարցերն ու ներկայացւած բողոքները եւ իր վճռահատումը ներկայացնել Վեհափառ Հայրապետին:

թ- Քննել եւ համապատասխան լուծում տալ Թեմական Խորհրդի դէմ ներկայացւած բողոքագրերին:

ժ- Քննել եւ մտքերի փոխանակութիւն կատարել թեմի սահմաններում ստեղծւած ընդհանուր խընդիրների մասին եւ այդ աթիւ ցուցմունքներ տալ Թեմական Խորհրդին:

**30ԴԻԱԾ 37**

Պատգամատրական ժողովին մասնակցում են նոյն ժողովի կողմից ընտրւած մարմինների անդամները, խորհրդակցական ձայնով:

**5. ԹԵՄԱԿԱԼ ԽՈՐՀՈՒՐԴ**

**30ԴԻԱԾ 38**

Թեմիանի Հայոց Թեմական Խորհուրդը բաղկացած է 9-13 անդամներից, որոնք ընտրւում են թեմի Պատգամատրական ժողովի կողմից, իր կազմի կամ կազմից դուրս գտնուող ազգայիններից, երկու տարւայ ժամանակաշրջանի համար:

Թեմական Խորհրդի կազմի ընտրութեան հետ միաժամանակ ընտրւում են նաեւ 3 անձնափոխանորդներ, որոնք ի պահանջել հարկին հրաւիրւում են մասնակցելու քիւնների Թեմական Խորհրդին, ստացւած հերթական կարգով: Թեմական Խորհրդի անդամների եւ անձնափոխանորդների ընտրութեան ժամանակ, Պատգամատրական ժողովը առաջնորդւում է այն սկզբունքով, որ ըստ հնարատրի իւրաքանչիւր թաղ, ներկայացուցիչներ ունենայ կազմի մէջ: Քեւարկութիւնը կատարւում է առաւելագոյնը երկպատիկ թեկնածուների ցանկի վրայից:

Թեմական Խորհրդի անդամները վերընտրելի են յաջորդ շրջանի համար, որից յետոյ վերստին կարող են ընտրւել Թեմական Խորհրդի անդամ, մէկ շրջանի դադարից յետոյ միայն:

**30ԴԻԱԾ 39**

Թեմական Խորհուրդը, իբրեւ թեմի բարձրագոյն գործադիր իշխանութիւնը, ունի հետեւեալ իրաւասութիւններն ու պարտականութիւնները.-

ա- Վարում է թեմի եկեղեցական, ազգային, կրթական եւ հասարակական աշխատանքները եւ հսկում պատկան հաստատութիւնների եւ մարմինների գործունեութեան վրայ:

բ- Թեմի հաստատութիւնների եւ մարմինների համար կազմում է կանոնագրութիւններ, նախագծեր, ընտրական եւ ժողովավարական կանոններ եւ ներկայացնում դրանք Պատգամատրական ժողովին առ ի հաստատում:

գ- Տալիս է հարկաւոր հրահանգներ մարմիններին, ղեկավարելով սոյն կանոնադրութեան եւ թեմի Պատգամատրական ժողովի կողմից տալւած որոշումներով:

դ- Գանձում, հաշարկում եւ պահում է Թեմական հաստատութիւնների եւ մարմինների հասոյթներն ու եկամուտները, կատարում եւ կարգադրում է թեմի վերաբերեալ ծախսերը եւ անհրաժեշտ որոշումներ է տալիս թեմի տնտեսական ընհանուր խնդիրների մասին, ղեկավարելով թեմի Պատգամատրական ժողովի կողմից վստերացւած նախահաշիւներով:

ե- Թոյլատրում է կատարել հանգանակութիւններ թեմում կամ թեմից դուրս, իր կողմից տրւած ժապալինեալ մատեաններով կամ կնքած յատուկ անդորագրերով:

զ- Թեմի սահմաններում տեղի ունեցած մկրտութիւնների, ամուսնութիւնների, ամուսնալուծութիւնների եւ մահերի վիճակագրութիւնը կանոնաւորապէս արձանագրելու եւ պահելու համար, սամն հարելվերջին Եկեղեցական խորհուրդներին է յանձնում այդ նպատակով պատրաստւած յատուկ տոմարներ եւ յաջորդ տարեվերջին յետ է ստանում վիճակագրութիւնները, Ազգարին Առաջնորդարանում պահուող մայր տոմարներում կենտրոնացնելու համար:

է- Քննում եւ վճռահատում է թեմի Եկեղեցական, ազգային եւ կրթական հաստատութիւնների եւ այդ հաստատութիւնների պաշտօնութեան կողմից ներկայացւած կամ նրանց դէմ յարուցւած բողոքները եւ խնդիրները:

ը- Իր տրամադրութեան տակ եղած անձեմխելի գումարները կամ յատուկ Ֆոնդերը պահ է դնում ապահով դրամատներում. ծախսում կամ յատկացնում իրենց նպատակին, այդ մասին նախապէս կայացւած որոշումների, արւած կտակների, կամ կնքւած պայմանագրերի տրամադրութեանց համաձայն: ■

# ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՊԱՏՉԱՍԱԴՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԿԸՅԻ ԱՍՈՒԼԻՍԸ ԹԵՐԱՆԱՐԱՅ ՍԱՍՈՒԼԻ ՐԵՏ

Ռ. Կորիւն  
Ռ. Սարգսրեան

Յուլիսի 2-ին Պատգամատրական ժողովի կենտրոնատեղիում ընտրական յանձնախմբի հրաւերով տեղի ունեցաւ մամուլի ասուլիս, որտեղ մասնակցել էին Իրանի Իսլ. Հանրապետութեան ռադիո-հեռուստատեսութեան հայկական ռադիոժամի, Արաքս և Ապագայ



ամսագրերի, Ալիք օրաթերթի եւ Լոյս երկշաբաթաթերթի թղթակիցները:

Հանդիպման սկզբում Կենտրոնական Ընտրական Յանձնախմբի ատենապետ՝ պրն. Թովմաս Թովմասեանցը բարի գալուստ մաղթեց բոլորին, եւ ասաց որ սա առաջին ասուլիսն է հայկական մամուլի հետ: Յանձնախմբի հրաւերով ներկայ էին Սրբազան հայր՝ Տ. Սեպուհ Եպս. Սարգսեանը եւ Թեհրանի Հայոց Թեմական խորհրդի ներկայացուցիչ՝ պրն. Ռուբիկ Կարապետեանը:

Ասուլիսը սկսեց Սրբազան հօր պատգամով, որն իր խօսքերում այսպէս արտայայտեց «Ես կուզեմ իսկապէս իմ ազնիւ գոհունակութիւնն յայտնել այս երեւոյթի համար, նախընտրական աշխատանքների սեմին մեր Կենտրոնական Ընտրական Յանձնախմբի այս գեղեցիկ նախաձեռնութիւնը հայատառ մամուլի հետ հանդիպումներ ունենալու, որպէսզի իր մտածումները եւ աշխատանքները փոխանցի ժողովրդին: Որովհետեւ մենք համոզուած ենք, որ հայ մամուլը մեծ դեր ունի այս ուղղութեամբ, յատկապէս երբ մամուլը ինքն իր առողջ ձեւի մէջ է եւ նպատակադրած է ժողովրդի դաստիարակութեան հարցում: Մանաւանդ, որ պէտք է նկատի ունենաք, որ տարիներ են անցել, երկու տասնամեակ է անցած այն օրից, երբ այս մեր գաղութի զաւակները առիթ ունեցան ընտրութեան մասնակցելու՝ Պատգամատրական Ժողով ընտրելու, հիմա այս պատեհ առիթը կը ստեղծի: Համաձայն մեր եկեղեցու ըմբռնումի

և հասկացողութեան, ազգ և ազգայինը իրար կապում են փոխադարձ իրաւունքի սկզբունքի վրայ, ազգը գոյացած է անհատներից, և ազգի ամբողջութիւնը այդ անհատներն են, այդ անհատներն իրենց պարտականութիւնն ունեն, հաւաքականութեան նկատմամբ եւ հաւաքականութիւնը փոխադարձաբար իր պարտականութիւններն ունի ազգայինների նկատմամբ: Այս հասկացողութեամբ է, որ մեր եկեղեցին հնուց ի վեր ժողովրդավարական այդ սկզբունքներով կառուցած է և իր կառոյցը դրա վրայ հիմնած է:

Փաստը այն է, որ 301 քաղաքացի մեր եկեղեցու առաջնորդների մէջ, ազգային եկեղեցական հաշիւներն են որոնք վճռական դեր են ունեցել: Ոչ մի ժամանակ չունէինք մի կաթողիկոս, որ ընտրած լինի լոկ եպիսկոպոսական կամ միայն եկեղեցական ժողովներով, այլ միշտ ժողովրդի ներկայացուցիչները, ներկայացնող հատուածի մասնակցութեան: Մենք հիմա կը պատրաստուենք մեր թեմի ամենակարեւոր ընտրութեան աշխատանքներին, օրենսդիր մարմինը որ գերագոյն մարմինն է թեմի: Հետեւաբար այդ իրողութիւնից մեկնելով է, որ Կենտրոնական Ընտրական Յանձնախումբը, մամուլը և մենք բոլորս մեզ ծանր պարտաւորութեան տակ կզգանք մեր ժողովրդի բոլոր զաւակներին ներգրաւել այդ ընտրութեան մէջ: Բոլորի պարտականութիւնն է գան և մասնակցեն ընտրութիւններին: Եթէ մենք նախանձախնդիր ենք մեր եկեղեցու, մեր առաջնորդարանի կամ ազգային որեւէ կառոյցի նկատմամբ այդ ժամանակը հիմա է, որպէսզի գանք և ընտրենք այնպիսի անձինք, որոնց վստահութիւն ունենք, որոնց ձեռքերի մէջ մենք յանձնենք մեր ազգային եկեղեցական աշխատանքները: Ես այդ մտածումներով կաղօթեմ մեր ժողովրդի բոլոր զաւակները նկատի առնեն մեր ընդհանրական շահերը և ոչ թէ պարագայական տուեալներից ելնելով կողմնորոշին: Այսօր պայմանները և ժամանակները փոխուած են, այսօրայ հայը երեկուայ հայը չէ և կարող է վաղանն էլ չլինի, որովհետեւ կեանքի մէջ յարափոփոխ այս երեւոյթները մեզ կը մղեն աւելի աշխարհ կերպով, աւելի յանձնառու պատասխանատւութեամբ մեր առջև դրած աշխատանքների մասին մտածելու և ըստ դրա կողմնորոշելու:

Այսօր նաև մենք չենք կարող չշարժիլ յարաբերաբար մեր հայրենիքին: Ճիշտ է մենք իրանցիներ ենք, ծագումով հայ իրանցիներ և մենք չենք ուրանալ դա, և պարտաւոր ենք որպէս իրանի քաղաքացիներ մեր այս երկրի բարգաւաճման համար և ամբողջականութեան պահպանման համար ամեն ջանք թափելու, բայց միևնույն ժամանակ դա կատարելու համար մեր հաւատարմութիւնը որեւէ ձեւով դրսեւորենք հանդէպ մեր մայր հայրենիքին և այդ կը լինի և երբ մենք լինենք շատ աւելի անկեղծ, շատ աւելի ամբողջական ձեւով մեր քաղաքացիական պարտականութիւնը կատարած կը լինենք »:

Սրբազանը վերջում շեշտեց, որ « Բոլոր մեր ժողովրդի զաւակները պէտք է զգաստ կերպով մասնակցեն ընտրութիւններին, որ գեղեցիկ առիթ է ցոյց տալու համար մեր կապաւածութիւնը մեր եկեղեցու և ազգային կառոյցների: Առիթ է նաև մեր լիիրաւ քաղաքացիական իրաւունքները ապրելու և դրսեւորելու, ցոյց տալ նաև մեր

# Ասուլիս

ժողովրդին, որ այս կառույցների տերը ի վերջոյ մենք ենք այսինքն ժողովուրդն է »:

Կենտրոնական ընտրական յանձնախմբի ատենապետ՝ պրն. Թովմաս Թովմասեանը ներկայացրեց յանձնախմբի անդամներին և հայ մամուլի ներկայացուցիչները ներկայացրին իրենց: Նա ամփոփ ներկայացրեց թէ ինչ աշխատանքներ են կատարել մինչ այժմ և ինչ աշխատանքներ են ծրագրել ապագայի համար: Նա իր խօսքերում մշեց.- « Ընտրութիւնների իրաւունքը արդէն ստացել է, կազմել են մի քանի ենթայանձնախմբեր, որոնցից են գրասենեակի աշխատանքը համակարգող և ուսումնասիրող ենթայանձնախմբեր: Ընտրատարանցքների ենթայանձնախմբերի կազմերը

ճշտող ենթայանձնախումբ եւ ընտրական կանոնները ուսումնասիրող ենթայանձնախումբ: Այս ենթայանձնախմբերը կազմած են Կենտրոնական ընտրական յանձնախմբի անդամներից: Այդ ենթայանձնախմբերը նախագծեր են պատրաստել, որոնցից որոշները ներկայացել են Կենտրոնական Ընտրական Յանձնախմբին եւ հաստատուել են, որոշ նախագծեր դեռ ընթացքի մէջ են: Երկու

հաղորդակցութեամբ մեր ժողովրդին ներկայացրել ենք մեր աշխատանքները եւ ցանկացել ենք, որ իրենց առաջարկներն ու տեսակետները ներկայացնեն, բայց դժբախտաբար մինչ այսօր ոչ մի առաջարկ եւ տեսակետ չի եղել: Կապ ենք հաստատել շրջանների եկեղեցադպրոցական հոգաբարձութիւնների հետ: Եւ այսպիսով ընտրական ենթայանձնախմբերը այս շրջաններում եկեղեցադպրոցական հոգաբարձութիւններն են լինելու: Մենք առաջարկել ենք, որ ընտրողների տարիքը իջեցնուի 18-ից 16 տարեկանի: Նկատի ունենալով, որ մեր ժողովրդի թիւը մասամբ պակսել է, առաջարկել ենք, որ 3000 բնակչին ընկնող մէկ պատգամատուրը փոխարինուի 2000 – ով:

Ընտրողների համար ճշտել ենք նոր պայմաններ, որոնք են հետեւեալը՝ 1- 25 տարեկանը պէտք է լրացած լինի: 2- Քւէարկութիւնից առնազն 6 ամիս առաջ հաստատուած լինի այդ տարածքում: 3- վերջին 4 տարւայ ծխական տուրքը վճարած լինի: 4- Միջնակարգի աստիճանական վկայական ունենայ, կամ 9 տարւայ կրթութեան մակարդակ: 5- Տաս տարւայ փորձառութիւն ազգային հասարակական կեանքում: 6- Իր ընտրատարածքում ճանաչած պէտք է լինի որպէս լաւ համբաւ ունեցող մարդ: 7- 15 ազգային պէտք է իրեն ներկայացնեն, որպէս թեկնածու: 8- Ներկայացնեն վերջին տարւայ վկայականը: 9- Դատական անպարտութեան վկայագիր ներկայացնեն: Իսկ թեկնածուները ընտրելու պարագային պէտք է ներկայացնեն թմրամոլութիւնից զերծ լինելու վկայագիր:

Ընտրական օրացոյցը կազմել ենք: Ըստ այս օրացոյցի սեպտեմբերի առաջին օրերից մեր աշխատանքը սկսուած է հետեւեալ ձեւով, որ թեկնածուները 2 շաբաթ ժամանակ ունենան իրենց ներկայացնելու: Ենթայանձնախմբերի քննարկումը կը տեւի 6 օր: Երեք օր ժամանակ է տրուած բողոքների համար, 2-3 օր ենք յատկացրել Կենտրոնական Ընտրական Յանձնախմբին այդ բողոքները քննարկելու համար: Երկու շաբաթ էլ նախատեսուած է, որ թեկնածուները իրենց քարոզչութիւնները կատարեն:

Ենթայանձնախմբի աշխատանքը հետեւեալ ձեւով ենք ի նկատի առել. իւրաքանչիւր ընտրատարածք կունենայ իր ենթայանձնախումբը: Այն ընտրատարածքներում, որտեղ մէկից անէի քւէատուփ է ունենալու, ամէն մի քւէատուփի



համար Ենթայանձնախմբի կողմից նշանակուած է քւէատուփի հսկիչ մարմին եւ ենթայանձնախմբի անդամներից մէկը դառնում է այդ քւէատուփի պատասխանատուն: Իսկ այն ընտրատարածքներում, որտեղ մէկ քւէատուփ գոյութիւն ունի ենթայանձնախումբը ստանձնում է նաեւ քւէատուփի հսկիչ մարմնի պատասխանատութիւնը: Միւս շաբաթ հանդիպում ենք կազմակերպել միութիւնների ներկայացուցիչների հետ: Նրանց օգնութիւնը պիտի խնդրենք քաղաքական ժողովրդին

իմաստով, որ-պէսզի խրախուսենք ընտրութիւններին մասնակցելու:

Այնուհետեւ տեղի ունեցաւ հարց ու պատասխան: «Արաքս»-ի թղթակից – Որբա՞ն է իրանահայութեան թիւը եւ ըստ այդ թիւ ինչպէս կը լինի պատգամատուրների թիւը:

Կ.Ը.Յ .- Մտածել ենք թեկնածուների հէնց նոյն թիւը պահել, այսինքն՝ 38 հոգի աշխարհական եւ դրա 1/7-ը հոգեւորական: Մրա մէջ չեն մտնում շրջանների թիւը: Թեքրահայութեան թիւ վերաբերեալ յարուկ բան չեմ կարող ասել: Ըստ 1375 թ. (պարսկական տարեթուով) պետութեան կողմից տրուած մարդահամարի տեղաւերը ըրհանրապէս քրիստոնեաների վերաբերեալ է եղել եւ ըստ մեր կատարած ուսումնասիրութիւնների ու տեղաւերի՝ միջին հաշուով շուրջ 70-80 հազար է թեքրահայութեան քանակը: Սա պատկերացում է եւ ոչ մի յատուկ բան չկայ:

«Արաքս»-ի թղթակից .- Տարածաշրջանների հայութեան քանակը ինչքա՞ն է եւ դրա հիման վրայ քանի՞ պատգամատուրներ են ընտրելու:

Կ.Ը.Յ .- Որոշ տեղաւեր ունենք, բայց վերջնականապէս դեռ որոշուած չէ:

Հայկական ռադիոժամի ներկայացուցիչ .- Խնդրում ենք մանրամասն բացատրել քարոզչական աշխատանքների մասին:

Կ.Ը.Յ .- Հենց այս մամուլի հանդիպումը քարոզչական աշխատանքի շարքի մէջ է մտնում եւ սա առաջին քայլն է: Նախքան սա եղել են մեր յարդրագրութիւնները, որը փոխանցել է հայ մամուլին, նախատեսել ենք պատասառներ, որոնք պէտք է փակցեն եկեղեցիներում, միութիւններում, որով ժողովրդին հրաւիրելու ենք մասնակցելու ընտրութիւններին, ունենալու ենք 4 թուցիկ եւ 2 պտկուկ:

Ճարուհակութիւնը յաջորդ համարում

# «Կապոյտ երկինք.. ..Սեւ ակնոցներ»

Կիսուշ Արզուեան  
13 մարտի 2000 թ.



Տանս լուսամուտից դուրս եմ մայում, Երեւանն է իր ջինջ ու կապոյտ երկինքով, իր պայծառ արեւով. լսում եմ ծտերի ուրախ ծվլոցը, որոնք գարնան արեւից տաքացած դուրս եմ եկել կեր փնտրելու: Տեսնում եմ Օպերայի գեղեցիկ շէնքը, Կոմիտասի, Մայաթ-Նովայի, Արամ Խաչատրեանի արձանները, իւրաքանչիւրը մի-մի արեւստի գործ. բայց ասադ տեսնում եմ նաեւ

կեղտոտ ու ւերած փողոցներ ու հնացած ու մաշւած էլեկտրալարերը, որոնք թում է թէ ամէն վայրկեան պիտի պոկւեն ու մարդկային գոհեր խլեն:

Համայնապատկերը լայնամուտ, մեծանում է ու ընդգրկում Հայաստան աշխարհի ամբողջ տարածքը:

Մուտք եմ գործում բնակարանների շէնքերից ներս քանդած ու կեղտոտ մուտքեր, կոտրատուած աստիճաններ, ջարդած ապակիներով պատուհաններ. մտածում եմ թէ- ո՞վ պէտք է ալի եւ նորոգի այդ մուտքերը, միթէ՞ մերը չեն, մեր տների այդ մուտքերը. միթէ՞ այդ մեր սեփական բնակարանների մուտքերը նաեւ պէտք է պետութիւնը՝ալի:

Ներս եմ մտնում թատերական ինստիտուտներ, նկարչական ցուցահանդէսներ, գրադարան- թանգարաններ, դպրոց, կամերային սրահ (որը ասադ լոտոյի կենտրոն է դարձել), գրողների միութեան շէնք. բոլորը մութ են ու ցուրտ. չէ՞ որ հոսանքի համար դրան պիտի վճարել. իսկ բարարար դրամ չկայ:

Բայց արեւստի իւրաքանչիւր կենտրոնում, գտնում եմ լուսատու մտքեր, բարձր ու վեհ հոգի ունեցող հայեր, արեստագէտներ ու գիտնականներ, գրողներ ու նկարիչներ, որոնք մի կողմ թողած անձնական ու ճղճիմ հաշիւներ ու *սքռո*, գործում են եւ աշխատում, նրանք որոնք դեռեւս դիմանում են, գոյատեւում յանուն իրենց հայրենիքի:

...Եւ մտածում եմ, - թէ ինչո՞ւ նրանք պիտի չհովանաւորեն. մտածում եմ թէ նրանց տնտեսական ո՞վ պիտի ապահովի. ո՞վ պիտի գիտակցի նրանց իւրաքանչիւրի արժէքին ու դերին հայրենիքի ապագայ վերելքի ճամբում:

- Միթէ՞ ինքը ժողովուրդն չի, իր հայրենիքի տէրն ու այս բոլորի հովանաւորողը:

Իսկ դրսում տեսնում եմ սեւ մեքենաներ իրենց սեւ երկար վերարկուներ հագած ու, « սեւ ակնոցներ» կրող տէրերով ինձ թում է թէ նրանց հոգին էլ է սեւ, իրենց ոտքի տակն անգամ չեն տեսնում, ինչ մնաց տասը քայլ հեռում նստած հայ մտրացկանին: Ակամայ մտածում եմ, - Գուցէ՞ իրենց ազահ ու փոքր հոգիներին բաւա-բարութիւն

տալու համար են վարձել մտրացկաններին եւ նրաց ցնցոտիներն ու խեղճութիւնը տեսնելով իրենք ի-րենց բարարած են զգում:

Չէ՞ որ այդ սեւազգեստ մանկլաիկները իրենք էլ ծառաներն են օտար տէրերի:

Ինչո՞ւ ենք այսպէս եւ ինչո՞ւ ենք մտածում, որ մենք յաւիտենական ենք առանց մեր ժողովրդի: Ինչպէ՞ս ենք կարողանում մեր տաքուկ սեռեակներում նստել, կաբարէների եւ մութ բարերի դռները բանալով ու այնտեղ յաճախելով, մեզ քաղաքակիրթ համարել:

*«Քաղակակիրթ մարդը, բնագոյաբար գիտէ, թէ իր պզտիկ պահանջներէն ու շահերէն վեր գոյութիւն ունին հաւաքական արժէքներ, հաւաքական շահեր, գոյութիւն ունին քաղաքականութիւն ու մշակոյթ, արեւստներ- հաւատքներ,- ինչ որ վերջապէս մարդկային քաղաքակրթութեան, հոգեկան, բարոյական, մտաւորական ու գաղափարական վերնաշէնը կը կազմէ: Սէկ խօսքով, ամէն քաղաքակիրթ մարդ աստուած մը, սուլթան մը, սրբութիւն մը, գեղեցկութիւն մը, յեղափոխութեան մը դրօշակը ունի իր հոգւոյն խորքը:*

### Վ. Շուշանեան

Այդ մարդիկ սեւազգեստ ու սեւահոգի, իրական աղքատներն են, որոնք լուրջամբ ընդունել են իրենց տէրերի «արժէքներն ու չափանիշները», որոնք դառել են օտարների ստրուկն ու խամաճիկը:

- Ո՞ր ես գնում հայ ժողովուրդը:

- Ո՞ր ես գնում հայրենի իշխանութիւն, եւ իրար բզկըտելով ո՞ր էք գնում հայ կուսակցութիւններ, որ երբէք մեր պատմութիւնից դաս չառեցիք, միշտ ապրեցիք եւ դեռ ապրում էք երազներով եւ օտարի կողմից լսած գովասանքները ձեզ հաճոյք են պատճառում, առանց տեսնելու ու գնահատելու դուք ձեր արժէքները եւ առանց տեսնելու ձեր իրական թուլութիւնը. առանց տեսնելու ձեր ստրուկ հոգին եւ առանց ճիգ ու ջանք տանելու ինքներդ ձեզ ուղղել:

- Արդեօք ա՞յս է պատասխանը մէկ ու կէս միլիոն մեր գոհերի թափած արեան:

Եթէ որոշել ենք օտարի լուծը միշտ մեր վզին կրելով, ստրուկի նկարագիրը վառ պահելով ապրել մինչեւ վերջ ու ձուլել ազգովի, էլ ինչո՞ւ ենք իզուր թրթր մրտտելով ու սեղանների առջեւ բաժակաճառեր ասելով,- Հայաստան ու հայ ժողովուրդ, հայ մտաւորական ու հայ արեստագէտ գովում. եկէ՛ք մեզ ազատենք ազգայինը գովելուց եւ ընդունենք, որ ստրուկ ենք օտարի, սիրում ենք այդ փոքրութիւնն ու այդ քծնանքը եւ խոստովանենք աշխարհին,- որ հայը այն չի, ինչ որ գրել է գրքերում եւ որպէս հին մշակոյթ ունեցող ժողովուրդ չի կարող մրցել աշխարհի մշակոյթների հետ: Նրա տէրը դրամն է, իսկ նա այդ դրամի եւ դրա տէրերի ծառան է ու ստրուկը:

Բայց միթէ՞ իրապէս չունենք հարուստ մշակոյթ. միթէ՞ իսկապէս չունենք սեփական ժողովրդի գրկից դուրս եկած մտաւորականութիւն, հայրենիքի ցաւով ու վերելքի համար մտածող ու գործող ուսուցիչներ, արեստագէտներ, գրողներ, քաղաքական գործիչներ:

Շար. տեսնել էջ 16-ում

ԸԱՐՑԱԶՐՈՅՑ

ՌԱՖԻԿ  
ԻՍԱՂՈՒԼԵԱՆԻ


ՐԵՏ



*Թղթակից: Նախ եւ առաջ շնորհակալութիւն են յայտնում՝ Ձեր թանկագին ժամանակը մեզ տրամադրելու համար: Որպէսզի ժամավաճառ չդառնանք, թոյլ տւէք անցնել մեր հարցերին:*

**Հ.- Ինչպէ՞ս եղաւ, որ սկսեցիք աշխատել Ֆիլմարեստի բնագաւառում, եւ ինչքանո՞վ էք կապուած Ձեր մախասիրութեանը:**

Պ.- Եթէ թոյլ տաք, ես էլ իմ հերթին ցանկանում եմ իմ խորին շնորհակալութիւնը յայտնել «Լոյս» թերթի խմբագրական կազմին, յանձինս ձեզ, իմ նմանների նկատմամբ ցուցաբերած ուշադրութեան համար, քանզի իրացիօրէն ես ինձ արեստագէտ չեմ համարում: Իսկ ինչ վերաբերում է հարցին՝



պարզապէս «սինեման» գրաւիչ մի արեստ է, եւ շատերին է գրաւում, ես էլ անմաս չմնացի: Ըստ-կրթում իմ աշխատանքը սիրո-ղական էր, օգտում էի շատ տարրական միջոցներից, հիմա կարելի է ասել արհեստավարժ եմ: Ի.Ի. յեղափոխութիւնից առաջ նկարահանել եմ «Ընկեր» Ֆիլմը եւ հենց այդ Ֆիլմով էլ մասնակցել եմ Ասիայի երիտասարդների փառատօսին: Այնու-

հետեւ իմ գիտելիքները լրաց-նելու նպատակով 4 տարի սովորել եմ «Մոսսուէլէ Իրան»ում: Դրանից յետոյ «Հայր ու որդի» Ֆիլմը նկարահանեցի: Յեղափոխութիւնից յետոյ ես իմ աշխատանքը ծաւալեցի եւ նոյնիսկ պատերազմական տարիներին՝ ռումբերի տարափի տակ եւ չղաղարեցրի իմ աշխատանքը: Այդ տարիներին իմ նկարած «Հայր ու որդի» Ֆիլմը 2 անգամ Ի.Ազ. հեռուստատեսութեամբ ցուցադրուեց, եւ զուգընթաց ինձ հետ կատարած հարցազրոյցը ցուցադրուեց հեռուստատեսութեամբ: «Հայր ու որդի» Ֆիլմից յետոյ «Տիարընդառաջ» վատերագրական Ֆիլմը նկարահանեցի: Իմ առաջնակարգ նպատակն էր հայ-կական թեմայով Ֆիլմեր նկարահանել եւ պատճառն էլ պարզ է՝ սիրում եմ իմ ազգային մշակոյթը, լեզուն, պատ-մութիւնը եւ արեստը:

**Հ.- Ամուսնացա՞ծ էք:**

Պ.- Այո, 3 զուակ ունեմ, որից երկուսը աղջիկ են:

**Հ.- Ձեր աշխատանքում խոչընդոտներ եղե՞լ են:**

Պ.- Այո, շատ: Բայց թոյլ տւէք խոչընդոտների մասին չխօսել:

**Հ.- Ձեր յուշերի մասին պատմէք:**

Պ.- Իմ անմենայիշարժան յուշերից մէկը կարելի է համարել այն բարեբաստիկ առիթն, որի շնորհիւ կարո-



Ռաֆիկ Իսաղուլեանը նկարահանելիս

ղացայ հեռուստատեսութեամբ հայերէն լեզուով ելոյթ ունենալ:

**Հ.- Լսել ենք, որ Դուք վերջերս լայնածաւալ աշխատանք էք ձեռնարկել, պատմէք այդ աշխատութեան մասին:**

Պ.- Ճիշտն ասած դա մի հսկայ աշխատանք է, որին ես ձեռնամուխ եմ եղել: Մտադրել եմ Իրանահայերի պատմութիւնը՝ կենցաղը, սովորութիւնները, նիստ ու կացը, Էկրանի վրայ բերել: Այդ աշխատութիւնը պատկերում է հայ ժողովրդի կեանքը սկսած 1604 թականից երբ հայերը հաստատուեցին Իրանում: Արդէն իսկ Ի.Ի.Հ.Մըշակոյթի մախարարութիւնից արտօնութիւն եմ ստացել: Իսկ այս հսկայ աշխատանքը իր արժանի եւ ցանկալի աւարտին հասցնելու համար ես խոնարհաբար խնդրում եմ բոլորից համեստիս օգնել, չմերժելով որեւէ օժանդակութիւն: Իհարկէ պարզ է իմ ցանկացածը նիւթական օժանդակութիւն չէ: Որեւէ փաստ, տեղեկութիւն, գիտու-



թիւն կը նպաստի վերոյիշեալ նպատակի իրագործմանը:

**Հ.- Գիտե՞նք, որ Դուք նաեւ լաւ երգում էք, եւ սեր ունեք**

*Իրան-Ֆայաստան բարեկամութեան տանը  
Ռաֆիկ Իսաղուլեանը կանգնածներից երրորդը*

**դէպի երաժշտութիւն, ի՞նչ կատք այս մասին:**

Պ.- Նախ պէտք է ասեմ առանց չափազանցութեան եւ ինձ երբէք արհեստավարժ երգին չեմ համարել: Բայց քանի որ սիրում եմ երաժշտութիւնը եւ երգը, հետեւաբար

## Մշակոյթ



*Ռաֆիկ Իսաղուլեանը Հանրաժանօք երգիչ՝ Ռուբէն Մատթոսեանի հետ*

մէկ-մէկ երգում են: Ունեն նաեւ ինքնուրոյն երաժշտական աշխատութիւններ: Ունեն մի քանի բանաստեղծութիւններ: Սիրում եւ զբաղում են նաեւ մարզանքով: «Մարտական» մարզաձեւի, «Անհատական պաշտպանութիւն» բաժնում, միջազգային պատկան Ֆեդերացիայի կողմից ստացել են գնահատագրեր:

**Հ.- Ինչպէս գիտեք մեր գաղութում արդէն գոյութիւն ունի արտագաղթի ցաւալի երեւոյթը: Ձեր կարծիքով ինչպէս՞ վ պիտի կանխել այդ տհաճ երեւոյթը:**

Պ.- Այդ մասին նախ եւ առաջ պէտք է Ազգային Իշխանութիւնը եւ մտաւորականները խորհեն: Այսօր ժողովուրդը մտաւոր բարարարութիւն չի ստանում: Համարեա ոչինչ չենք տալիս հասարակութեանը՝ ոչ ազգային գիտակցութիւն եւ ոչ էլ գիտական տեղեկութիւններ: Կարծես ամէն ինչ սպառած է՝ ոչ մի տեղաշարժ: Իսկ սա մի երկու անհատի գործ չէ: Այս մասին պէտք է ազգովին մտածենք եւ ինքնակէ գործնականի պիտի վերածուի մեր մտայղացումները:

**Հ.- Հիմա վերադառնանք Ձեր վերջին աշխատանքին: Այդ կապակցութեամբ կատարած աշխատանքները ի՞նչ փոխում են:**

Պ.- Դեռ անելիքներ շատ կան: Ես ուսումնասիրելու նպատակով քանի անգամ ճամբորդել եմ մեր հայկական գաւառները: Նոյնիսկ այն վայրերը որ արդէն հայաբափ են եղել: Ուսումնասիրել եմ նրանց պատմութիւնը, կենցաղը, սովորութիւնները եւ... Իմ պատկերացումով այդ վաւերագրական Ֆիլմը ենթադրում եմ 400 ժամայ Ֆիլմ կը լինի:

**Հ.- Արդե՞օք կը ցանկանայիք Ձեր գաւակները Ձեր հետեւորդը դառնան:**

Պ.- Մեծ աղջիկս «Տնտեսութեան տնօրինութիւն» ճիւղըն է ընտրել համալսարանում: Փոքր աղջիկս «Գրաֆիկա»ն է ընտրել: Իսկ տղասս 10 տարեկան է: Շատ է սիրում երգելը: Բնականաբար ուրախ կը լինեն իմ նախասիրութիւնը ընտրեն: Սակայն երբէք չէի ցանկանայ կամքս նրանց թելադրել: Նրանց ազատ եմ թողել իրենց ընտրութեան մէջ:

**Հ.- Ձեզ օժանդակողներ եղե՞լ են:**

Պ.- Բառի իսկական իմաստով երբէք որեւէ մէկը ինձ

չի օժանդակել: Ինձ միայն ընտանիքիս անդամներն են օգնել խրախուսելով:

**Հ.- Արեւստը չի խաչընդոտում Ձեր անձնական կեանքը:**

Պ.- Եթէ ոչ ուրիշ բանով, Ֆինանսական իմաստով ինքնակէ կը խոչընդոտի: Ֆիլմարեւստի աշխատանքը որեւէ նիւթական եկամուտ չունի ինձ համար: Հետեւաբար ես իմ անձնական կեանքի ծախսերը հոգալու համար պարտաւոր եմ մի ուրիշ գործ էլ ունենալ:

**Հ.- Եկեք խոստովանենք, որ արեւստագետի հետ ապրելը դժուար է: Ձեր ամուսինը այդ հարցին ինչպէ՞ս է մտնում:**

Պ.- Դուք ճիշտ էք նկատել, բայց ես ու կինս այդ մասին շատ ենք խորհրդակցել եւ նա հաւանել է իմ սկզբունքները: Մի խօսքով մենք որեւէ դժարութիւն չունենք:

**Հ.- Ի՞նչ սպասելիքներ ունեք իրանահայ մամուլից:**

Պ.- Հայ մամուլը պէտք է թեւ ու քիկունք հանդիսանայ արեւստի մշակներին, արտացոլի նրանց արդար պահանջները: Արեւստագետը պիտի համոզուի, որ իր գործը գնահատում է:

Առիթից օգտւելով իմ շնորհակալութիւնն եմ յայտնում մանաւանդ ձեր ցուցաբերած ուշադրութեան եւ ջերմ ընդունելութեան համար: Ուժ եւ կորով եմ ցանկանում թերթի բոլոր աշխատակիցներին: ■

*Հարցազրոյցը վարեց՝ Անահիտ Բարումեանը*

**Շար. էջ 14-ից**

Ես հանդիպեցի նրանց Հայաստանում, Երեւան քաղաքում. զգացի ու շոշափեցի նրանց մեծահոգութիւնը, նրանց ազգային ոգին ու նրանց ափսոսանքը ի տես ժողովրդի այն խափ, որոնք ճիշտ չեն ճանաչում օտար երկիրները, որոնք չգիտեն թէ ուր են գնում, օտարութեան ճամբաները բռնած չգիտեն թէ գնում են իրենց երեխաներին կորցնելու որպէս հայ սերունդ, որոնք հոգով չեն գզում, չեն շոշափում Պարոյր Մեակիին՝

- «Օտարութեան մէջ, ազատ ապրելն էլ, այլ գերութիւն է,

Իսկ տան մէջ նոյնիսկ գերի լինելը այլ ազատութիւն»:

Ես հաւատացի, որ հայրենիքը կը յարատեւի իր **գիտակից ու պայքարող** մտաւորականներով, իր մշակոյթի մշակներով, որոնցից իւրաքանչիւրը **ասուած մը, սուլթան մը, գեղեցկութիւն մը, յեղափոխութեան մը դրօշակը** ունեն իրենց հոգիներում:

Ես հաւատացի այն պատանի- պարմանուտիներին, այն երիտասարդ-ուռիներին, որոնք ցուրտ սրահներում շարունակում են իրենց փորձերը, որոնք իրենց մնջախաղով, իրենց պարի ու երաժշտութեան բարձր կատարումներով, իրենց թատերական արեւստով ու վերջապէս իրենց քաղաքական արթուն գիտակցութեամբ ու պահանջատիրութեամբ ու պայքարով պիտի նպաստեն Հայաստանի վերելքին ու հզօրութեանը:

Երանի թէ ողջ ազգով խելքի գանք, քանի դեռ ամբողջովին ձեռքից չենք տուել մեր բնակարաններն ու ազգային կառոյցները, քանի դեռ ամբողջովին ձեռքից չենք տուել մեզ համար այնքան քանակ Հայաստանը: ■





# Արւեստը բարեկամութեան կամուրջ է

Վաչիկ Վարդանեան

«Բարեկամութիւն» երգի ու պարի համոյթը մի անգամ եւս փաստեց, որ Հայաստանը «Մշակոյթի եւ արւեստի» երկիր է: Փառք ու պատիւ մեր հայրենի ժողովրդին, որ նոյնիսկ այս անբարենպաստ եւ ծանր պայմաններում իր արւեստագէտների ցուցաբերած արւեստով հիացնում ու զարմացնում է բոլորին:

Այս օրերին Թեհրանի Հայ Կաթողիկէ Առաջնորդարանի հրաւերով Թեհրանում է գտնուում Հայաստանի «Բարեկամութիւն» երգի ու պարի համոյթը: Համոյթը իր ելոյթով իրօք աննախընթաց խանդավառութիւն է ստեղծել համայնքում: Հանդիսատեսը ամէն անգամ իր հետ տանում է անջնջելի տպաւորութիւն:

Երբ խորհում ես թէ նրանք ինչ պայմաններում են ստեղծագործում, կամայ- ականայ գլուխ ես խոնարհում նրանց առաջ: Չափազանցութիւն չի լինի եթէ ասենք նրանք կեանքի գնով են պահում մեր արւեստը:

Մենք հանդիպում ունեցանք «Բարեկամութիւն» համոյթի գեղարւեստական ղեկավար՝ տիկ. Գոհար Միրաքեանի հետ: Նախ տիկ. Միրաքեանը իր երախտագիտութիւնը յայտնեց այն անձերի՝ յանձնիս Վարդապետ Թոսունեանի, պրն. Լեւոն Յովհաննիսեանի եւ... որոնք անվերապահօրէն օժանդակել են խմբին եւ իրենց ցուցաբերած բարիացական վերաբերմունքով երաշխաւորել խմբին: Այնուհետեւ յարգելի պարուսոյցը սիրալիք պատասխանեց մեր հետեւեալ հարցերին:

**Հարց.- Կը խնդրեմ ներկայացնէք Ձեզ եւ Ձեր ղեկավարած խմբին:**

Պատասխան.- «Բարեկամութիւն» համոյթը գործում է շուրջ 35 տարի, որի գեղարւեստական ղեկավարն է կուլտուրայի վաստակատու գործիչ՝ պրն. Յովսէփ Շամանեանը: Համոյթը հիմնադրել է մօտաւորապէս 40 տարի առաջ եւ սերունդից սերունդ անցնում է պատանիների, որոնք մեզ մօտ սկսում են ուսանել հինգ տարեկանից: Ես Յ. Շամանեանի անմիջական տեղակալն եմ: Պրն. Շամանեանի բացակայութեան դէպքում խմբի ղեկավարելու պարտականութիւնը յանձնարարել է ինձ, եւ իմ անմիջական օգնականն է՝ Գագիկ Արդալեանը, որի օգնութիւնը եւ աշխատանքը շատ մեծ դեր է խաղում գործունէութեան եւ ձեռք բերած յաջողութիւնների մէջ: Գոհար Այրազեանը՝ ասիսթենթս, որը օգնում է երեխաներին ուսուցանել հայկական եւ ոչ հայկական պարը, քանի որ մեզ մօտ սովորում են տարբեր ազգերի պարեր, որոնց ներկայութիւնը դուր տեսաք բեմահարթակի վրայ:



**Հ.- Ինչպէ՞ս եղաւ որ Իրան ժամանեցիք եւ ո՞րն է Ձեր առաքելութիւնը:**

Պ.- Համոյթն եղել էր Իրանում դեռ վեց տարի սրանից առաջ եւ ցուցադրել էր իր արւեստը՝ Իրանում տեղաբնակ հայերին, այնպէս որ այս հիման վրայ երկրորդ անգամ



նաեւ հրաւիրեց հայոց Կաթողիկէ Առաջնորդարանի հովապետ՝ Վարտապետ Թոսունեանի կողմից, որը մեր համոյթի վաղեմի բարեկամն է, որին մենք իրօք երախտապարտ ենք:

**Հ.- Ինչպէս ականատես եղանք Ձեր ներկայացրած ծրագիրը բազմաբնոյթ է, նկատի ունենալով պարերի հանգամանքը, արդե՞օք Ձեր ծրագիրը պատրաստելիս նկատի էք առել Ձեր հիւրընկալի առաջարկները:**



Պ.- Իհարկէ ճանաչելով ժողովրդին եւ նրա պահանջն ու կարիքը, ծանօթ լինելով թէ ինչի կարիք ունի տեղի հայաբնակ ժողովուրդը, մենք ցանկացել ենք երգել եւ պարել նրանց սրտից բխածի համաձայն: «Բարեկամութիւն» համոյթը հէնց ջանում է իր կոչումի համաձայն վարել, հետեւաբար մեր ծրագիրը բազմաբնոյթ եւ բազմաձև է:

**Հ.- Ելոյթի ընթացքում տեսանք, որ բեմի փոքր լինելը ինչքան է աշխատանքի վրայ ազդում. համաձայ՞ն էք ինձ հետ:**

Պ.- Իհարկէ համաձայն եմ, բայց որ պարում ես, համակերպում ես: Մեր երեխաները շատ կարճ ժամանակում ընտելացան եւ կարծես արդարացնում են իրենց: Եթէ մի քիչ էլ աւելի փոքր լինէր, կարծում եմ երեխաները նոյն ձեւով պէտք է ներկայանային:

## Մշակոյթ



### Հ.- Չեր կարծիքով արւեստը մեր գոյատեւման հարցում ինչքա՞ն դեր ունի:

Պ.- Արւեստը շատ մեծ դեր ունի մեր գոյատեւման հարցում, առանց արւեստի, մենք արւեստագէտներս մեր կեանքը չենք պատկերացնում, մենք ձգտում ենք, աւելին ենք ձգտում, քանի որ արւեստը մեզ յոյս է ներշնչում գոյատեւելու եւ չվհասուելու:

### Հ.- Արդե՞օք Չեր ղեկավարած խումբը մնայուն հովանատր ունի, եթէ ոչ ապա ինչպէ՞ս էք Ֆինանսատրում:

Պ.- Յաւօք, խումբը երբեիցէ որեւէ հովանատր չի ունեցել, բացառապէս այն վերաբերմունքների, որ մենք տեսել ենք տարբեր երկրներում ինչպէս այստեղ վարձատրում ենք նման վերաբերմունքներով, քանի որ ամմիջական ոչ մի հովանատր չունենք. ուղղակի երեխայի ծնողը ինչ որ ձեռով, իրեն նեղելով կարողանում է որեիցէ պարագգեստի եւ այլ ծախսեր կատարի, որպէսզի երեխան բեմ բարձրանայ. յոյսով ենք մեր պետութեան մէջ ամէն ինչ կը կարգադրուի եւ դրա հետ մէկտեղ մեր համայնքի վիճակը կը բարելաւուի:

### Հ.- Ուրեմն այդ ամբողջ զգեստների կամ հարկ եղած իրերի գումարը, որոնք գործի համար անհրաժեշտ են, անձնական Ֆինանսների՞ց է գալիս:

Պ.- Պատկերացրէք այո, եւ աշակերտների Ֆինանսով եւ ծնողների համատեղ ջերմութեան արդիւնքի շնորհիւ մենք այսօր գոյատեւում ենք եւ ներկայացնում ենք մեր արւեստը տարբեր բեմահարթակներում:

### Հ.- Ի՞նչ երկիրներ էք այցելել:

Պ.- Համոյթը չորս անգամ եղել է Ֆրանսիայի տարբեր արարձաններում, երկու անգամ Իրանում, Հունգարիայում, Չեխիայում, Գերմանիայում, Լիբանանում, Սլիւիայում, Մեկզիկայում, Ճապոնիայում, Իրաքում, Ռուսաստանի Դաշնութեան բոլոր բազմամարդ քաղաքներում, Կանադայում, Պանամայում եւ...:

### Հ.- Չեր յարաբերութիւնները խմբի անդամների ընտանիքների հետ ինչպէ՞ս է (նկատի ունեն բարոյական իմաստով):

Պ.- Դա մի շատ պարզ հասկացողութիւն է, եթէ լաւ յարաբերութիւններ չլինէին, երկար ճանապարհ կտրելու համար, ծնողն երեխային չէր յանձնի այս ղեկավարութեանը: Այո, ջերմօրէն համագործակցում ենք միասին: Սա մի ընտանիք է, որ առաւօտից բոլորս միասին ենք կիսում ենք մեր հոգսերը, մեր գործերը եւ իհարկէ շատ-

շատ յաճախ ուրախութիւնները: Մէկս միսի հետ ջերմօրէն համագործակցում ենք այլ կերպ համոյթը կը քայքայի եթէ չլինի այդ ջերմութիւնը:

### Հ.- Աշխատանքը չի խոչընդոտու՞մ Չեր անձնական կեանքը:

Պ.- Ես կատէի օգնում է, որովհետեւ երբ որ տխուր ես, ինչ որ հոգս ունես կամ դժարութիւնը հարթւած չի, ինչ որ մի բանի կարիք ունես, գալիս ես աշխատանքի, պարելով, ուսուցանելով, երեխային նայելով մոռանում ես հոգսերդ եւ տրամադրւած տուն ես վերադառնում:

### Հ.- Ի՞նչ տպաւորութիւն ունէք իրանահայերից:

Պ.- Տպաւորութիւնս վաղեմի է, որովհետեւ երկրորդ անգամ մեկնելուց առաջ, ես իմ աշխատակիցներին էի ներկայացնում իմ տպաւորութիւնս՝ այն որ շատ ջերմ ժողովուրդ են, շատ տաք ժողովուրդ են, կարծես թէ շարժում են մեր նման՝ ոնց որ Հայաստանում հայերն են շարժում... Երկրորդ անգամ այս շէնքը մտնելով ես ինձ իմ տանն էի գգում:

### Հ.- Եթէ կայ ցանկութիւններ կամ չարտացոլւած հարցեր, որ Դուք կուզենայիք առանձնապէս անդրադառնալ, կամ ինչ որ Չեր սրտում կայ, որ պիտի արտացոլի մեր քերթի միջոցով կը խնդրեմ արտայայտէք:

Պ.- Օգտւելով աշիբից կուզենայի ամբողջ «Բարեկամութիւն» համոյթի անունից իմ շնորհակալութիւնն յայտնել Հ.Կ. Առաջնորդարանի ողջ կազմին՝ ցուցաբերած



գերմարդկային վերաբերմունքի համար: Դուք արդէն նկատում էք երեխաների դէմքի ժպիտը, որը արդէն ամէն ինչ ասում է: Երեխաները տեսնելով այս բոլորը, դրանք դարձնում են իրենց կեանքի ուղեգիծը, նրանք համոզւում են որ պէտք է ծառայել հայ ազգին եւ ապագայ մեր մանուկներին, որոնք իրենց շրջապատում են: Յոյսով եմ որ նորից կը հանդիպենք աւելի լաւ պայմաններում: ■

خدمات ساختمانی خانیان

ԽԱՆԵԱՆ

انجام کلیه کارهای لوله کشی گرم و سرد شوفاژ و تعمیرات، نصب و سرویس

بهداشتی - نقاشی

تلفن: ۸۴۱۶۳۹۱

# ՀԱՅԵՐԷՆ-ՉԻԵԴԵՐԷՆ ԲԱՌԱՐԱՆԻ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

## Հովիկ Էդգարեան

Մեծ ուրախութեամբ կարդացիք «Փարոս» 15 սեպտեմբերի եւ «Ասպարէզ» 09.07.1991 թ.-ի Հայ-Շիւեդերէն բառարան կազմելու մասին յօդածները՝ «Հայաստան» թերթի խմբագիր եւ Արմենայրես-ի թղթակից՝ Վարդան Գրիգորեանի ստորագրութեամբ: Յիշեալ թերթը այդ լուրը ստացել է հեռատիպից եւ Հայաստանի մամուլից:

Բառարանը կազմել է Իրանահայ եւ Հայաստանում ուսանած ու Շիւեդիա հաստատուած Պոլ Պալօ Մինասեանը: Նա գաւակն է Իրանահայ հանգուցեալ բանաստեղծ Էմիլ Մինասեանի, որը իր քրոջ՝ Սիլայի հետ միասին վարում են Ստոկհոլմի Հայկական Ռ-աղիոյի խմբագրման եւ ձայնասփռման գործը:

Գովելի եւ ողջունելի է այդ աշխատութիւնը, որը մի պարծանք է եւս աւելացնում Հայ բառարանագիտութեան գործին:



Ուրախութեամբ կարդում ենք նաեւ, որ Պոլ Մինասեանը կազմում է նաեւ Շիւեդերէն-Հայերէն բառարանը: Կրկնակի ողջոյն իրեն:

Մակայն, այն ինչ որ զարմանալի է, «Նոր Կեանք»-ի մէջ տպագրուած 26 սեպտեմբերի 1991 թ.-ի յօդածն է, որը կրում է «Օրը օրին բառարան մը եւ երկու հարցում» վերնագիր՝ Թ.Արփի ստորագրութեամբ, արտատպուած «Յառաջ» 7 սեպ.ից,

որը քննադատում է ուղղագրութիւնը:

Նախ յայտնենք, որ ինչպէս գրեցիք՝ պատանի հասակից այդ բառարան կազմողը, իր ծնողների հետ ներգաղթել է Հայաստան եւ ուսումը կատարելագործել է այնտեղում, որի ուղղագրութիւնը նոր ուղղագրութիւն է:

Ես չեմ պաշտպանում այդ ուղղագրութիւնը եւ ինքս էլ դասական ուղղագրութեամբ եմ գրում, այլ յայտնեմ, որ ինչ որ մեր երկիրը անում է որպէս կենտրոն՝ եւ մեծամասնութիւն մենք, սփիւռքահայերս էլ ենթակայ ենք դրան... Մանաւանդ Իրանահայերս, որ թէ՛ մեր լեզուն է Արեւելահայերէն եւ թէ՛ ուղղագրութիւնը տարբեր է Արեւմտահայերէնից:

Երկրորդ՝ բառարանը չի կազմում ամիսների ընթացքում, այլ տարիներ է պէտք եւ նա կատարել է այդ գործը նախքան Խորհրդային Միութեան փլուզումը, որի խառնաշփոթութիւնից օգուելով, որոշ սփիւռքահայեր ամաչարկեցին ուղղագրութեան փոխելու խնդիրը, որը եւ խիստ մերժեց:

Հայաստանում Նոր ուղղագրութիւնը հնի փոխելու խնդիրը վերջերս է ծայր առել, շնորհի մի խումբ փոքրամասնութեան: Բնականաբար եթէ Հայաստանը կընդունի՝ մենք էլ ենթակայ ենք. դա մեր ազգային պետականութեան ուղղագրութիւնն է:

Ամենից զարմանալին այն է, որ «Զննադատ» Թ. Արփին այդքան եւ հակառակ լինելով Նոր ուղղագրութեանը՝ դեռ չգիտի որ մեր ուղղագրութիւնը «Մաշտոցի կողմ ընդունուած ուղղագրութիւն» չէ եւ չի կարող լինել, քանի որ Մեսրոպ Մաշտոցի տառերը աւելի պակաս էին քան արդի այբուբենը եւ յետագայում են աւելացել միւս տառերը: Այդ ուղղագրութիւնը, ինչպէս գրել եմ «դասական» է կոչում:

Փոխարէն պարծենալու, որ մի հայ երիտասարդ իր կեանքը դրել, նիւրեւ է եւ տարիներ տքնաջան աշխատանքով բառարան է կազմել՝ եկել են մանրութեւս պրայտում: ■



## ՏԻՎՐՈՒՆԻ

*Լոյս երկշաբաթաթերթը իր վշտակցութիւնն է յայտնում ներքոյիշեալ նորոգ հանգուցեալների անմիջական հարազատներին և բոլոր սգակիրներին:*

- ◆ Էմիլ Մարտինի
- ◆ Լեւոն Շահինեան
- ◆ Բալասան Ծատուրեան (Օրուջեան)
- ◆ Սանդուխտ Արթունի (Մելքոնեան)
- ◆ Էմմա Նիկողոսեան (Գրիգորեան)
- ◆ Էմիլ Սուրադեան
- ◆ Ովսաննա Վարդումեան (Փանոսեան)
- ◆ Սիմոն Մանսուրեան
- ◆ Նանաջան (Մագի) Աւանէսեան
- ◆ Վազգէն (Պարզկ) Բաղդասարեան


# ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ՀԱՍՏ ԱՂԻՔԻ ՔԱՂՑԿԵՂԻ ՄԱՍԻՆ ԵՒ ԹԷ ԻՆՉՊԷՍ ԿԱՐԵԼԻ Է ԱՅՆ ԿԱՆԽԵԼ

**Գրեց՝ Զրիստին Գորման  
Թարգմանեց՝  
Լեւոն Ահարոնեան  
TIME Ճաբաբաթերթից 20.03.00**



Այդպիսով, նա ցանկանում է աշխարհով մեկ տարածել, որ արդիւնատու է հիւանդութեան շուտափոյթ յայտնաբերումը եւ գնալով կատարելագործում է բուժումը ու նոյնպէս մեր սնունդը եւ մարզանքի տեսակը կարող է մեծ ազդեցութիւն ունենալ հիւանդութեան կանխարգելու գործում:

Կուտիկը, յետադարձ հայեացքով, յիշում է, որ միակ ախտանիշը որն ունէր իր ամուսինը, այն էր, որ տառապում էր երկարատեւ խրոնիկ



յոզմածութիւնից եւ որովայնի ցաւից: Մի քանի ամիս անց, ցաւից երկտակած դիմեց բժշկի: Մի շարք շողանկարներ եւ այլ ստուգումներ պարզեցին, որ նա տառապում է քաղցկեղից, որը տարածել էր մինչեւ լեարդը եւ նրա մահուան պատճառ դարձաւ 1998 թի յունւարի 24-ին, իր 42-րդ տարեդարձից 2 շաբաթ անց:

Գերադասելի է, որ երեսակալական հիւանդութիւններով մտահոգւելու փոխարէն, փորձենք փոքր ինչ

աւելի տեղեկութիւններ ստանալ հաստ աղիքի քաղցկեղի մասին:

Հաստ աղիքի քաղցկեղի մասին եղած առասպելներն ու սխալ ընկալումները, հաւանաբար աւելի են քան որեւէ այլ մահացու հիւանդութեան պարագայում: Երիտասարդները կարծում են, թէ դա մի հիւանդութիւն է, որ միայն կապուած է տարեցներից, իսկ կանայք էլ ենթադրում են, թէ դա միայն տղամարդկանց է վերաբերում: Սակայն այս հիւանդութիւնը փաստօրէն հարածում է եւ երիտասարդներից, եւ տարեցներից, նոյնպէս կանանց եւ տղամարդկանց: Ռորշ մարդիկ էլ զուգարանի եւ անճանկան հիգենիայի հետ կապուող խնդիրների շուրջ արտայայտւելու զայւրածութեան պատճառով, չեն ցանկանում նոյնիսկ լսել կամ մտածել այդ մասին եւ խուսափում են լիակատար անալիզներից ու քննութիւններից, որոնք կարող են իրենց կեանքը փրկել:

Այս կարգի վերապահութիւնը մահացու հետեւանք ունեցաւ Peanuts կարտոնային շարանի հեղինակ Չարլզ Շուլցի համար, հակառակ այն իրողութեան, որ իր մայրը, երկու քեռիներն ու մօրաքոյրերը հաստ աղիքի քաղցկեղով էին մահացել, նա չհամաձայնեց ստուգման ենթարկել: Իսկ երբ բժիշկները յայտնաբերեցին նրա հիւանդութիւնը, ուսուցչը արդէն տարածել էր մինչեւ ստանդըս, եւ բնականաբար շատ բան չէին կարող անել նրանք:

Նոյնիսկ երբ մեր ընտանեկան բրժիշկը յորդորում է, որ ստուգման ենթարկենք մեր հարազատին, միշտ չէ որ լսում ենք նրա խորհրդին:

Մէկ ու կէս տարի առաջ, Վիլիամսգորպից 73 ամեայ Ֆլորանս Մեզինը, մերժեց իր բժշկի առաջադրանքը ենթարկելու Colonoscopy -ի քննութեան: Այդ քննութեամբ բժիշկը մի կակող խողովակ, որի ծայրին մի ճրագ է յարմարեցուած, անց է կացնում հաստ աղիքի մէջ եւ ստուգում է աղիքում որեւէ անբնականոն ուռուցք փնտրելու նպատակով:

Ֆլորանս Մեզինը քաջ գիտէր, որ իր երեք եղբայրներից մէկը մահացել է հաստ աղիքի քաղցկեղից, բայց նա անտեսեց այդ փաստը, մինչեւ մի օր պատահմամբ կարդաց Կարի Կորիկի յօդածը իր ամուսնու վերաբերեալ: Նա անմիջապէս դիմեց բժշկի եւ ենթարկեց անհրաժեշտ քննութիւնների: Բարեբախտաբար ուռուցքը, որ գտան բժիշկները նրա հաստ աղիքում բաւականին փոքր էր, եւ հնարատր եղաւ վիրահատումով հեռացնել այն: Չպիտի ակնկալել, որ Մեզինի նմանատիպ դէպքերը հատուցում կը լինեն Կորիկի կրած կորստի համար, սակայն ինչ որ չափով բաւարարութիւն են պատճառում նրան: «Առանց ամուսնու, խիստ դժար է իւրաքանչիւր օրս», ասում է Կորիկը, «Բայց եթէ կարողանամ նոյնիսկ մեկ ընտանիքի տառապանքից ազատել, դա մեծ արժէք ունի ինձ համար»: ■

**Ճար. 2**

**ՑԱՄԱԿՑԱԿԱՆ**

*Խորը կակիծով, տեղեկացանք, որ կեանքից առ յաւէտ հեռացաւ մեր շատ սիրելի բարեկամ՝*

**Վազգէն Բաղդասարեանը**

*«Լոյս» երկշաբաթերթի խմբագրական կազմը իր ցաւակցութիւնն է յայտնում հանգուցեալի հարազատներին, բարեկամներին եւ ընկերներին:*

Անմիջական սգակիրներ՝

1. Շուշիկ Նազարեան (այրին)
2. Արթուր Բաղդասարեան (որդին)
3. Առլետ Բաղդասարեան (ղուստրը)
4. Ծովհնար Բաղդասարեան (թոյրը) ընտանիքով
5. Շնորհիկ Բաղդասարեան (թոյրը) ընտանիքով
6. Նազարեան զերդաստանը

# ԽԱՉԲԱՌ- ՀԱՄԱՐ 4

կազմեց՝  
Կ. Տ. Յովհաննիսեանը

## Շորիզոնական

- Հայոց վերջին սպարապետը:
- Ածական անխորտակելի պարիսպների մասին-օժանդակ բայ-անջատ:
- Կապոց-վավաշոտ անձ-անտառային ամուր բնափայտով ծառ:
- Արեւմտահայերէն՝ այնպիսի, այնպէս-բաց կապոյտ հանքային քար-խաղողի ողկոյգ:
- Կիսատ նիշ...-կոչում են տարածող հիւանդութիւնները:
- Խօսակցական՝ տան ծառայ-անբուժելի հիւանդութիւն-հարածելով ջարդել:
- Սնամէջ դար...-մեխ-հոտաւէտ, անուշահոտ:
- Հրապարակ, աշխատելու բնագաւառ-(ուղագրական սխալով) դուարը բնորոշող անուն:
- Ֆիզիոլոգիական արատներով զբաղող մասնագէտ անձ-արքայական խորհրդ-դանիշ:
- Հայերի մէջ եւս գործածող իզական օտար անուն-Ֆեոդալական:
- Բարբառական՝ քարածուխ-բարձր ձայն-մօր անուանմաներից:
- Ընդդէմներից-խմում են առհասարակ տօներին-հաղորդակցութեան միջոց:
- Ժողովրդական՝ տմարդ-մէկ տառ՝ երեք տառով-կերած նուշ...:
- Փոխաբերական իմաստով՝ հովանաւոր-քերականութեան մէջ՝ բառից յետոյ դուրս ածական:
- Լուսաւորութեան խորհրդանիշն է-արւեստի ձեւ-Իսլամական տօներից:

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	
1																
2									■			■				
3				■							■					
4						■						■				
5		■			■								■		■	
6						■				■						
7			■				■			■						
8								■				■		■		
9		■									■				■	
10					■										■	
11				■								■				
12		■				■							■			
13												■		■		
14	■							■								
15				■		■			■							■

ԼՈՒԾԵՔ  
ԽԱՉԲԱՌԸ  
  
ՍՍԱՅԵՔ  
ՆԻԲ

## Ուղղահայեաց

- Հայրենի մեծ բանաստեղծ:
- Խոհանոցային պիտոյք-արտօնած սպանութիւն-առարկայ-նոր կտորած աթոռ...
- Տառասկանք-դիմախաղ(օտար):
- Խորտակած գահ-աշխարհի մեծագոյն ջրվէժներից-որոշած վճար:
- Չափածոյ ստեղծագործութիւններ գրող, վիպերգու-գլխավար՝ գործողութիւն-նաեւ՝ զգացմունք:
- Երկաթէ ձող, դռան փականք-բնական կարծր նիւթ-«եղ» վերջաւորութեամբ՝ զետեղել:
- Փառամոլ-սիրատուն էակ-ստացական դերանուն:
- Ծովային բարձրագոյն աստիճանաւոր (օտար)-փաթաթող ու վեր բարձրացող բոյս:
- Գերդասելի է քանակից-վատի ու չարի խորհրդանիշն է:
- Գ-աղձի մի տեսակը սպիտակ ծաղիկներով-գօրքի իջեւանած վայրը:
- Չայնանիշ է-հաշտութեան մեծագոյն ազդակը-ցածից՝ ժխտական ածանց:
- Վատ-մաճնաջուր-երկիր ԱՖրիկայում:
- Քաղաք սեւ ծովի ափին- տիաս դառնալ-անշունչ մարմին:
- Յանդիմանել-իզական անուն:
- Արինախում միջատ-ջրային տարածք-վարակիչ հիւանդութեան գլխաւոր ազդակը:

Խաչբառ համար 3-ի  
լուծած տարբերակը  
տե՛ս էջ 24-ում:

# Ժամանց



## Յուլիս

Գրաբարում գրել և նախնական շրջանում կարդացել է իլլիս: Կապույտ է հռոմեացի խոշորագույն քաղաքագետ, զորավար, հռետոր, գրող եւ պատմաբան Յուլիոս Կեսարի (մ.թ.ա. 100 կամ 102-44) անուն հետ, որ լատիներեն ամբողջական յորջորջումներով այսպես է հնչում՝ Caius Julius Caesar : Եղել է Հռոմեական Կայսրության ղեկավարը մ.թ.ա. 49-44-ին, յատկապես հռչակել է Գալլիայի նաճումով, որի մասին զիրք է գրել: Յուլիոսը նրա ծնած ամիսն է:

Յուլիսից սկսած դրուժինը փոխում է, կարելի է ասել՝ շրջում. արդեն մարդկանց են սկսում աստածացնել, երկինքներ բարձրացնել:

Այս առումով այդ բախտին առաջինն արժանանում է Յուլիոս Կեսարը՝ Հռոմեական Կայսրությանն իր մատուցած ծառայությունների համար: Եւ այս ամիսը կոչում է Julius mensis «Յուլիոսի ամիս», կամ կարճ՝ Julius (լատիներեն այս ձեւը հնչյունական կողմով ուշադիր համեմատեցեք գրաբար *իլլիս*-ի հետ): Անգլերեն July, Ֆրանսերեն juillet, գերմաներեն Juli:

Այնքան մեծ էր Յուլիոսը հռոմեացիների աչքում, որ նրա անունը շնորհեցին բերդերի (Պորտուս Յուլիոս պատմական ռազմական նաւահանգիստ Իտալիայի այժմեան Կամպանիա մարզում), բնակավայրերի (*Յեզարենա*- հին յունարեն *Կախարեիա*- հայերեն Կեսարիա, բուրբերեն *Կայսերի* Արամտեան Հայաստանում):



### Ասացածքներ

- ◆ Առածը խօսքի աղն է:
- ◆ Այծը այծի համար լաւ է, քան մի հօտ ոչխարը:
- ◆ Մխտոր որ չուտես, բերանիցդ հոտ չի գայ:



### Հումոր

⇒ - Ըստ աղջիկների գիտես, որոնք չեն ցանկանում ամուսնանալ:

- Որտեղի՞ց գիտես:
- Ես առաջարկել եմ, իսկ նրանք՝ մերժել:

⇒ Մի մատուցողի հարցնում են, թէ որն է նրա ամենակատարեալ երազանքը:

Մատուցողը պատասխանում է.

- Իմ երազանքն այն է, որ ռեստորաններ յաճախող քաղաքացիները տանը ճաշեն, իսկ այն անելորդ դրամը, որ տալիս են մեզ՝ փոստով ուղարկեն:

⇒ - Անյարմար է,- դիմելով որդուն, խրատում է հայրը,- քո տարիքին ես երբեք չեմ ստել:

- Իսկ դու որ տարիքից ես ստել,- հարցնում է որդին:



### Հանելուկ

Փոքրիկ գունաւոր  
Երկու պատուհան  
Արևին, շողին՝  
Աչքերին վահան:

«Ճսոյիմ վլզմլղ»

### Փաստեր

Անգլերեն լեզուն ունի ամենաշատ բառերը, մօտ մէկ միլիոն բառեր գոյութիւն ունեն այս լեզուն, որից 1/3-ը տեխնիկական տերմիններ են: Ժողովրդի մեծ մասը այս բառերի 1%-ը,այսինքն 10000 բառ է օգտագործում: Վիլիամ Շեքսպիրը յայտնի է, որպէս այս լեզվի ամենաշատ բառեր օգտագործող անճնաւորութիւն:

### Թւարանական ռեբուսը լուծի՛ր

$$\begin{array}{r} \text{Բ Բ Ի Ե Զ} \\ \times \quad \text{Բ} \\ \hline \text{Զ Զ Զ Զ Զ Զ} \end{array}$$

Ծանօթութիւն- Իւրաքանչիւր տառին համապատասխանում է 0-9 թւերից որևէ մէկը:

օրինակ՝

$$\begin{array}{r} \text{Ի Դ Կ} \\ \times \quad Դ \\ \hline \text{Դ Կ Ե} \end{array}$$

սրան համապատասխան թւերն են՝

$$\begin{array}{r} \text{1 2 5} \\ \times \quad 2 \\ \hline \text{2 5 0} \end{array}$$

### Ականջ

Ականջները տեղադրած են գլխի վրայ. ձախ ականջը՝ աջ կողմում, աջը՝ ձախ՝, որպէսզի ոչ ոք աջ ձեռքով չքորի ձախ ականջը, ձախով՝ աջը:



Երեխաների ականջները ծառայում են նրանց դաստիարակութեան վեհ գործին, որն իրականացում է քաշելով կամ ոլորելով: Ականջը պէտք է ոլորել երեք անգամից ոչ անելի: Գորրորդ պտոյտը կարող է հասցնել անցանկալի հետևանքների:

Կանանց ականջները նախատեսւած են զանազան արժէքաւոր առարկաներ կախելու համար, իսկ տղամարդկանց ականջների նշանակութիւնը դեռ չի պարզաւած:

Յատուկ ենթախումբ են կազմում տարանցիկ ականջները. խօսքը մէկից մտնում՝ միսից դուրս է գալիս և միջանկեալ տարածութեան մէջ ոչ մի հետք չի թողնում:



Փորձագետի  
ձայնորդութիւնները



Պրոֆ. Ռ. Ա. Ղազարեան

-Ես չեմ հարցնում, թէ ո՞վ է կիսատել ծծմբաթթւի շիշը...-ասաց քիմիայի ուսուցչուհի Անահիտ Արամովնան և նայեց ինձ ու Աշոտին: Մենք կայտեցինք գլուխներս:

Այդ բոլորն Աշոտի մեղքերն են: Միշտ նա բաներ է հնարում իրենից... ինձ էլ փորձանքի մէջ գցում: Իսկ եթէ հրաժարում եմ, ձեռ է առնում՝

-Ինչպէ՞ս կարելի է, չէ որ «մենք» գերազանցիկ ենք... Մամայի բալիկ:

Ստիպւած համաձայնում եմ... թող չերևակայի, որ վախենում եմ: Այս անգամ էլ նոյնը կրկնեց: Բայց ոչինչ, մայրիկս ասում է, որ սխալւելով եմ սովորում: Ճիշտ է, հայրիկս չի կարծում, որ դա սովորելու լուսագոյն ձև է:

Մի օր, երբ, ըստ սովորութեան, ես հաւաքում էի մարտկոցային երկլամպ ռադիոընդունիչը, ներս մտաւ Աշոտը:

-Հարիր տարի է հաւաքում ես էդ գահրումարը,- ամմիջապէս վրայ տուց նա,- այդպէս էլ կը մեռնեմ ու չեմ լսի դրա ձայնը:

-Իսկ դու ի՞նչ է, վաղը մտադիր ես մեռնելո՞ւ...

-Իսկ դու ինչ է, վաղը մտադիր ես վերջացնելո՞ւ:

-Ես կը վերջացնեմ... ա՛յ, միայն լամպերի սնման ակումուլետտոր ճարեմ...

Աշոտը ցուցադրական յուսահատութեամբ թափ տուց ձեռքը.

-Էլի էն ջո՛ւրը, էլի էն ջաղացը...

-Բա, ես ի՞նչ մեղք ունեմ, եթէ ակումուլետտոր չկայ... քեզ թողնեն մեծ-մեծ խօսես... Ապա փորձիր ճարել:

-Ինձ որ պէտք լինէր քայտաբար կը ճարէի:

-Օ՛յ, ինչո՞ւ այդքան ձգձգել,- որքան հնարատր է թունոտ ասացի ես:

-Վայրկենաբար:

-Ու կը ճարէի... կամ թէ, չէ հենց ինքս կը սարքէի... Մեծ բան չի, եղած չեղածը երկու կապարէ թիթեղներ և ծծմբաթթւի լուծույթ...

-Քեզանից լա՛ւ գիտեմ, ոնց եմ սարքում... Էդիստն ես դարձել գլխիս: Դու ասա, որտեղի՞ց ծծմբաթթու կը ճարես:

-Իիի՛նչ... ծծմբաթթու՞...

-Այո, ծծմբաթթու:

-Ծծմբաթթու՞, հա՞,- աշխատում էր ժամանակ շահել Աշոտը: -Պահ... հասարակ բան է՝ հենց քիմկաթիմետից էլ կը թոցնեմ:

-Հապա մի փորձիր... Անահիտ Արամովնան քեզ այնպէս կը թոցնի...

-Ես կը թոցնեմ... գրագ զա՞նք...

-Լա՛ւ, շատ մի երևակայիր, ինքս էլ կարող եմ:

-Դո՞ւ...

-Ես...

-Ընդհանուր քրքիջ,- մտայլ եզրափակեց Աշոտը:

Ես գիտէի, որ մենակ չեմ համարձակուի, բայց չէի ուզում խոստովանել Աշոտին:

Որոշեցինք գործել միասին: Յաջորդ օրը գրպանիս մէջ բերեցի դատարկ դեղասրակ: Մեր ձեռնայարկում հազար հատ կայ դրանցից: Աշոտի գրպանը նոյնպէս կասկածելի դուրս էր ցցւած:

Դասն սկսեց: Անահիտ Արամովնան իրաքանչիւր ցատարանին դրեց ինչ-որ փոշիներով լեցուն երկուական փորձասրակ, մի-մի մազմիս և բաժակով ջուր: Ուրեմն այսօր էլ հետաքրքիր հանելուկներ ենք գուշակելու: Ես անհամբեր սպասում էի, թէ ինչ կասի ուսուցչուհին: Աշոտը լրջօրէն հոտոտում էր փոշիները:

- Չեր առջև ծծմբի և երկաթի փոշիներ են,- ասաց Անահիտ Արամովնան: - Սակայն դուք չգիտէք որը որ փորձանօթի մէջ է: Հապա մտածէք, ինչպէս կը տարբերէք դրանք:

Ես նայեցի ցատարանին՝ աչքս ընկաւ մազմիսին: Ահա, իմացայ...

- Մազմիսով կը փորձենք փոշիները,- միաժամանակ գոռացի մի քանիսս: - Երկաթափոշին կը կաշի:

-Ճիշտ է,- Անահիտ Արամովնան մի պահ լռեց.

-Այժմ մի փոքր բարդացնենք իրավիճակը. ձեռքի տակ մազմիս չունենք... ի՞նչ էք առաջարկում... Մենք տենդրագին մտածում էինք: Յանկարծ, ձեռք բարձրացրեց Յասմիկը:

-Ասա, Յասմիկ:

-Ես փոշիները կը ցնեմ ջրի մէջ,- հանգիստ ասաց Յասմիկը: Երկաթափոշին անմիջապէս կիջնի յատակ:

-Իսկ ծծմբափոշի՞ն...

-Համարեա չի սուզուի... Յասմիկն անվստահ նա-յեց Անահիտ Արամովնային:

-Այրեն՝ Յասմիկ,- Անահիտ Արամովնան չէր թաքցնում իր գոհունակութիւնը, և ես ափսոսացի, որ մի քիչ ուշացայ: Բայց Յասմիկին բոլորովին չնախանձեցի, նա լաւ սովորող է, համեստ, օգնութեան հասնող:

-Լա՛ւ... երկարացրեց Անահիտ Արամովնան,- Մենք առանձնացրեցինք երկաթափոշին: Սակայն չգի-տենք, թէ ի՞նչ նիւթ է միսը. ընդունենք ես ձեզ չեմ ասել, որ դա ծծումբ է: Ի՞նչ առաջարկութիւններ կան...

-Չափենք տեսակարար կշիռը՞,- եմքաղդեցի ես:

-Ճիշտ է, Մուշեղ: Ի դէպ, որքա՞ն է ծծմբի տեսակարար կշիռը:

-Պարզ է, ջրից ծանր չի լինի, որ չի սուզում,- ասաց Աշոտը:

-Դատողութիւնդ ճիշտ է Աշոտ, բայց դու հաշիւ չառար, որ մենք գործ ունենք փոշու հետ: Իրականում ծծումբը ջրից ծանր է, սակայն մանր հատիկները շատ դանդաղ են իջնում ներքև: Եկէք ինքներս համոզուենք դրանում:

Մենք ջուր ցրեցինք ծաւալաչափ սանդղակով սրակի մէջ և մտապահեցինք ջրի ծաւալը: Այնուհետև կշռեցինք ծծմբափոշին և դատարկեցինք ջրով սրակի մէջ: Ջրի մակարդակը սրակում բարձրացաւ: Հանելով այդ նոր արժէքից նախկինը, գտանք փոշու ծաւալը: Տեսակարար կշիռը ստանալու համար մնում էր փոշու կշիռը բաժանել նրա ծաւալի վրայ, երբ Անահիտ Արամովնային խընդրեցինք դուրս գալ փորձասենեակից:

- Արի. շո՛ւտ,- Ֆշշաց Աշոտը:

- Ո՞ւր...

- Ծծմբաթթւի հետևից, շշմած:

- Ահ, մտքիցս թռել էր...

## Երիտասարդի համար

- Յնդած պրոֆեսոր...

Ես ուզեցի ասել, որ պետք չէ, բայց գիտեի որ նա կը ծաղրի, կասի որ վախեցայ: Մենք պահաբանի 22ից շտապ ցրեցինք մեր դեղատրակները և նոր միայն նկատեցինք, որ խցաններ չունենք:

- Թղթից ոլորի, փակիր,- փափասց Աշոտը:

- Էդ ի՞նչ էք անում այնտեղ,- անմիջապես ականջները սրեց Ալկան:

Ջզելին ամեն տեղ պիտի քիթը խոթի:

- Բո գործը չէ,- մրթմրթաց Աշոտը:

- Ա՛յ, հիմա կասեմ Անահիտ Արամովնային, կիմասա իմ գործն է, թե իմը չէ:

- Հապա մի փորձիր, անպոչ գդալ,- սպառնալից վրայ պրծաւ Աշոտը, բայց նոյն պահին վերադարձաւ Անահիտ Արամովնան:

Սա ի՞նչ շուկայ է, դարձաւ նա մեզ:

- Հը, ասե՞մ, ասե՞մ,- զզելի ձայնով վրայ բերեց Ալկան:

- Քեզ չեմ հարցնում,- ընդհատեց նրան ուսուցչուհին և դարձաւ ինձ.

Իսկ աչքերդ ինչո՞ւ են քառակուսի դարձել:

Ինձ... ինձ պետք էր...

- Մեզ թորած ջուր էր պետք,- ընդհատեց ինձ Աշոտը,- որպէսզի փորձը անելի մաքուր ստացի:

Անահիտ Արամովնան մի պահ լռեց, յետոյ ասաց Աշոտին.

- Այդ ո՞վ է քեզ ներշնչել, որ ստելը անելի լաւ է, քան ճիշտ խօսելը:

Աշոտը գլուխը կախեց: Ես նոյնպէս:

- Լաւ, շարունակե՛ք չափումները,- ասաց Անահիտ Արամովնան և անցաւ իր սեղանի մօտ:

- Որ ասում էի քեզ...- շնջացի ես:

- Ի՞նչ էիր ասում,- կիսաձայն բորբոքեց Աշոտը,- ոչինչ էլ չէիր ասում:

Վերջապէս դասն արարուեց, և մենք գնացինք տուն: Մինչ այդ, չէինք համարձակուի սրակները գրպաններից հանել: Տուն հասնելով նոր դուրս քաշեցինք: Թղթի խցանները տոգորել էին ծծմբաթթուով և խոնաւացել:

- Չեք չտասա, կը վառի,- զգուշացրի ես:

- Մի՛ լցրու ջուրը ծծմբաթթուի մէջ, այլ ծծմբաթթուն լցրու ջրի մէջ,- բեմական հանդիսարութեամբ արտասանեց Աշոտը: Մի սրան տես... քիմկարիներու պատին է կարդացել, հիմա զարմացնում է: Ո՞վ չգիտի, որ եթէ ջուրը լցնես ծծմբաթթուի մէջ, ապա նա կը ժայթքի երեսին և... ցտեսութիւն ասա աչքերիդ:

Առանց քեզ գիտեմ,- ասացի:

Գիշերը ոտքիս մաշկը սկսեց աստիկ մռմռալ: Առաւօտեան մայցիցի. գրպանիս տակ մաշկը կարմրել էր: Յետոյ փքեց շալարիս գրպանը, ապա և շալարիս վրայ մեծ ծակ առաջացաւ: Աշոտի հետ նոյնը կատարեց: Տեղն է նրան:

- Չեմ հասկանում, էդ ի՞նչ գոռ ա հասել շալարիդ... միայն քեզ հետ են այդպիսի օշիններ պատահում, բարկացաւ տատս:

Հէ՛չ էլ չէ... Աշոտինն էլ է նոյն ձևով ծակել:

Դէ՛ դուք մի ծառի պտուղ էք...

- Ես շատ եմ կասկածում, որ դա հերթական զոհաբերութիւնն է հանուն գիտութեան,- ասաց մայրիկը: Ո՞նց էլ իմացաւ:

- Ես չեմ հարցնում, թե ով է կիսատել ծծմբաթթուի շիշը,- ասաց յաջորդ դասին Անահիտ Արամովնան և նայեց ինձ ու Աշոտին,- նմանապէս չեմ հարցնում, թե ինչու են տարել ծծմբաթթուն... անշուշտ խմելու համար չէ... ինձ հետաքրքրում է միայն մի հարց՝ ինչո՞ւ այդ մեծարգոյ գիտարանները, ուղղակի չխնդրեցին ինձանից այդ ծծմբաթթուն: Գուցէ որևէ մէկը կարծում է, որ ես կը մերժե՞ի,- դարձաւ նա դասարանին:

- Օ՛, իհարկէ ոչ,- անմիջապէս վրայ բերեց Ալկան և խոժոռ հայեացք ձգեց մեզ վրայ:

- Ո՛ւու, շողոքո՞րթ,- մռմռաց Աշոտը:

Ճիշտ է ասում էլի,- ասացի ես,- Անահիտ Արամովնան երբեք չէր մերժի:

- Առանց քեզ գիտեմ, որ չէր մերժի,- զրգուեց Աշոտը,- նոր բան ասա:

- Նոր բա՞ն,- զայրացայ ես,- այ ետ կը բերեմ ծծմբաթթուն, կը լինի նոր բան:

- Շատ նրան պէտք է քո ծծմբաթթուն:

- Բա ի՞նչ ես առաջարկում:

- Ներողութիւն խնդրել, ա՛յ թե ինչ:

Թէկուզ մահու չափ չեմ սիրում համաձայնել Աշոտի հետ, բայց այս անգամ նա իրաւացի է, հարկատու է դասամիջոցին ներողութիւն խնդրել: ■

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	ա	կ	ս	ե	լ	բ	ա	կ	ու	ն	ց	ա	կ	ի	
2	գ	ա	ր	ս	ո	ն	ն	ո	ր	ս	ա	ա	ա	լ	
3	ա	ր	ա	կ	ա	ն	տ	տ	տ	ա	ո	ա	ց	ի	
4	թ	ա	մ	բ	կ	ա	ր	կ	ա	տ	ա	ն	ի	կ	
5	ա	գ	ի	ա	ի	ա	ի	ե	թ	ա	ծ	ա	ն	ն	
6	ն	տ	ե	ն	չ	ա	լ	ի	մ	ա	հ	ա	կ		
7	գ	ա	ա	ս	ո	ն	ա	ն	ա	գ	հ	ա			
8	ե	ղ	ե	ր	ա	կ	ա	ն	գ	ն	է	լ	ր		
9	ղ	ա	ա	լ	ա	տ	լ	ի	ա	տ	ա	բ	ու		
10	ո	տ	ի	կ	տ	ա	ր	ծ	ա	գ	ա	հ			
11	ս	ա	ր	կ	ա	լ	ա	գ	ա	ր	տ	ր	ի		
12	ն	ու	տ	ի	ձ	ե	ղ	ա	ն	ա	կ	ա			
13	թ	ե	մ	ա	կ	ա	ն	ի	ր	ա	լ	ա	ն		
14	ա	լ	ե	ա	կ	բ	լ	ո	կ	ն	օ	ս	ր		
15	ս	ի	ր	տ	մ	ո	տ	ք	ի	կ	ս	ա			

**Համար 3  
խաչբառի  
լուծած  
տարբերակ**



## Ոսկե Օղակներ

«ԼՈՅՍ» երկշաբաթաթերթը ջերմօրէն շնորհաւորում է նոր ամուսնացած սիրելի զոյգերին

- ♥ Ժանէթ Սարգսեան - Ռոբերտ Շահվերդեան
- ♥ Դեզիրէ Մկրտչեան - Ռայմոնդ Վարդուհեան
- ♥ Շաքէ Դաւթեան - Արա Շահվերդեան
- ♥ Ռիմա Աւրանդ - Արտուր Շահբազեան